

Հայկական գիտական հարազարակության համապատասխան  
Armenian Research & Academic Repository



Եվուա պահանջման արդեմքնաբառը՝ Արևոտնագիտական ճամփարանների  
մշտական գործադրությունը 3.0՝ արդեմատագրավ

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported License.

၁၂၈

የንግድ ተስፋ ስለመስጠት ተስፋ ተስፋ ተስፋ ተስፋ ተስፋ ተስፋ ተስፋ ተስፋ

You are welcome;

ՀԱՅԻ - ՀԵՂԻ ՀԱՅԻ ՀԵՂԻ ՀԱՅԻ ՀԵՂԻ ՀԱՅԻ ՀԵՂԻ ՀԱՅԻ ՀԵՂԻ ՀԱՅԻ

አዲስ-ፍትህ, በአዲስ-ፍትህ, የዚሁን ስለጊዜ ተደርጓል፡፡








~~614.885 (47.925)~~ 29205.

4-18 Чубакургай, У.

Slipkumapp Зибакургай

Чиңжүр бөвчтө: 3m.



614.885

4-18

ԱՅՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ 399 ✓

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԻՎԱԶԻ

ԶԵԿՈՅՑ Հ. Կ. Խ. Ի Ն Ա Խ Ս Գ Ա Հ

ԲԺԻՇԿ ՍՊԱՆԴԱՐԱՏ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ

ՆԱԽԱԲԱՆ Հ. Կ. Խ. Ի ԲԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՑԻՒՆԻՆ

ՓՈԽ-ՆԱԽԱԳԱՎԱՀ ՏՈՔ. ՔՕԼՕԼԵԱՆԵ

165

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Բարիզի Հայ Տիկնանց Միութեան  
Հ. Կ. Խ. Ի մասնաճիւղին



ԱԳՐ. Յ. ՊՈՂՈՍԵԱՆ

ԲԱՐԻԶ

1926





## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հ. Կ. Խաչի նախագահը պատիւ կ'ընէ ինծի խնդրելով որ Հայաստանի կ. Խ.ի գործունէութիւնը ներկայացնող տեղեկազրին նախաբանը գրեմ:

Նախ պարտականութիւն կը համարիմ շնորհակալութիւններս յայտնել բարիզի Հայ Տիկնանց Միութեան, որ կազմակերպեց Բարիզի Հ. Կ. Խաչը եւ այս գրքոյկին հրատարակութիւնը ստանձնեց, յետոյ զմայլումս՝ Հայաստանի կ. Խաչի նախագահին, որ երեք տարուան կարճ շրջանի մը մէջ կրցաւ ոտքի վրայ դնել այն ընկերութիւնը, որ կատարելապէս կազմակերպեալ երկիրներու մէջ միայն գոյութիւն ունի:

Ի՞նչ ժրաշան աշխատութիւն, ի՞նչ հրաշալի գործունէութիւն, եւ ինչ խրախուսիչ արդիւնքներ: Խորհեցէք վայրկեան մը. կ. Խաչերը գոյութիւն ունին 1864 էն իվեր ու հասած են այսօր համաշխարհային կատարելագործեալ կազմակերպութեան մ առինանին: Հայաստան երեք տարւան մէջ նուագար ջանքերով կրցաւ ունենալ Հ. Կ. ար եւ նման միւս ըոլոր կ. Խաչերու, հայութեան գոյութիւնը ոչ միայն իր ղինւորական կազմակերպութիւնը, որ կ. Խաչերու գործունէութեան առաջին աշտն էր, այլ հիմնելով իրեն մասնաւոր հիւանդանոցները, տրոպիկական կայանները, լավուաթուառները, անոք տղոց ապաստանարանը եւ զթութեան քոյրերու դպրոցը: Եւրոպական կ. Խաչերը չունին աւելին:

Հ. Կ. Խաչը եւ իր նախագահը՝ բժիշկ Կամսարական, չեն գոհանար այս արդիւնքով։ Կ'ուղեն աւելին ընել։ Կ'ուղեն որ ամէն հայ, որ կը սիրէ իր հայրենիքը, իր ազգակիցները, անդամ ըւլայ Հ. Կ. Խաչի։

Կ. Խաչի այս առաքեալը, Կ. Խաչը Ճեռքը՝ Եկած է Եւրոպա մեզի ցոյց տալու եղած ճիգը Հայաստանի մէջ։ Ամերիկա պիտի երթայ ան, Խրախուսելու նաեւ հոն ապրող հայերը, որոնք չմոռցան իրենց հայրենիքը եւ զրկեցին իրենց առլարնեաը թէ՛ վերաշինութեան գործին մասնակցելու եւ թէ Կ. Խաչի նուիրական աշխատութիւնը դիւրացնելու։

Ե՞րբ ծնան Կ. Խաչերը։

1859 ին Հանրի Տիւնօ անուն անձը, տեսնելով թէ Սոլֆէրինոյի պատերազմի դաշտին վրայ գտնուող մեծ թիւով վիրաւորեալները, առանց խնամքի կը մնային, զինուորական բժիշկներու ու հիւանդապահներու քանակին քիչութեան պատճառաւ, խորհեցաւ ընկերութիւն մը կազմել, որուն անդամները՝ ոչ պատերազմիկներ՝ կարենային երթալ պատերազմի դաշտը հաւաքելու վիրաւորեալները ու խնամելու զանոնք, զինուորական բժիշկներու հսկողութեան տակ։

1864 օգոստոս 22-ին Տիւնօ կրցաւ վերջապէս Փընեւ հրաւիրել բոլոր քաղաքակրթեալ ազգերու եւ կառավարութեանց ներկայացուցիչները ու կանոնաւորել իր գաղափարային ընկերակցութիւնը։ Այդ օրէն սկսեալ Convention de Genève ու յետոյ Comité international de la Croix Rouge անուան տակ Կ. Խաչը ծնած էր։

Ընդունուեցաւ քաղաքակրթուած բոլոր պետքերու կողմէ որ Կ. Խաչի ընկերութիւնը չէզ զօք էր ու կընար պատերազմի ատեն ընկերանալ կոռուող քանակին եւ օգնել վիրաւորեալներուն, անոնք ըլլային ազգային քանակին թէ թշնամիին զինուորները։ Կ. Խաչը ճերմակ դրօ-

շակի վրայ իր նշանն էր՝ ընդունուած բոլոր  
բանակներէ:

Ընդունեցաւ որ հակառակորդները պիտի չյար-  
ձակէին կ. Խաչ կրող զինուորներու եւ կամ վրան-  
ներու վրայ, պիտի յարգէին բոլոր կ. Խաչերը ուր  
որ ալ ըլլային անոնք:

Վերջին մեծ պատերազմին բոլոր այս ըն-  
դունած սովորութիւնները եւ միջազգային յանձ-  
նառութիւնները չյարգուեցան ոմանց կողմէ:  
Պատմութիւնը ցոյց կուտայ մեզի թէ 1864 էն  
իվեր շատ ուրիշ պատերազմներու ատեն ալ կ.  
Խաչի անդամները, բժիշկ հիւանդապահ ու ծառա-  
յող, զոհ գացած են իրենց անձնուիրութեան:

1864 ի ֆընեւի քօնկրէէն յետոյ բոլոր ազգե-  
րը կազմեցին իրենց մասնաւոր կ. Խաչերը պետա-  
կան հսկողութեան տակ, ընդունելով ֆընեւի  
ընդհանուր կ. Խաչի կանոնագիրը: Ամենուն ալ  
նպատակն էր սլատերազմի ատեն օդնել կոռող  
բանակի բժշկական գործին, բայց այդ հսկայ գոր-  
ծը կարենալ իրագործելու համար պէտք էր պատ-  
րաստուիլ խաղաղութեան ժամանակ:

1864 էն ի վեր ֆընեւի համադային կ. Խաչը  
12 անգամ Congrès ներ կազմակերպեց: 11 երրդ  
գօնկրէին Պոլսոյ Խ. Խաչը հրաւիրուած էր կէս  
պաշտօնապէս ու ներկայ գտնուեցաւ:

Այս թուականէն իվեր ընդհանուր օրէնք եղած  
է որ բոլոր քաղաքակրթեալ ազգերը պէտք է ունե-  
նան իրենց կ. Խաչերը ու պետական միջոցներով  
դիմեն ֆընեւ եւ կապուին համազային կ. Խաչին:

1921ին Տք. Կամսարական, Հ. կ. Խաչի նախա-  
գահը, կը խնդրէր մեզմէ որ անմիջապէս կազմա-  
կերպէինք Բարիզի կ. Խաչը՝ ծնած 1919ին: Դի-  
մեցինք այն ատեն ֆրանսական կ. Խաչի ու ֆընեւ:  
Ըսին մեզի ֆընեւէն թէ արգէն յարաբերութեան  
մէջ են կ. Պոլսոյ Հ. կ. Խաչի հետ, ու երկար թըդ-

թակցութիւններէ յետոյ կրցանք վերջնականապէս մեր գոյութիւնը ճանչցնել տալ ժընեւի մէջ, իբրեւ Հ. Կ. Խաչ:

Ֆրանսական կառավարութիւնը մեր գոյութիւնը հաստատող պաշտօնեան գրութիւն չի տուաւ, բայց մեզ կը ճանչնար կէս պաշտօնապէս: Իսկ ֆրանսական կ. Խաչը դեռ մեզ չի ճանչնար պաշտօնապէս, թէեւ գիտէ թէ մենք գոյութիւն ունինք, գիտէ թէ մենք կը գործենք ու կ'ընենք ջանքեր օգնելու Հայաստանի: Ուրեմն ան մեզ չճանչնալով հանդերձ պաշտօնապէս, արգելք չըլլար մեր գործունէութեան մինչեւ ոք մեր կառավարութիւնը ընէ պէտք եղած դիւանագիտական (diplomaticus) դիմումները:

Ահա քանի մը բառով կ. Խաչերու պատմութիւնը:

Սկսած պատերազմի հետեւանքավ, կ. Խաչը սակայն չէր կրնար գործել բանակէն դուրս: Բոլոր կ. Խաչերու անդամները, հիւանդ մարդկութիւնը ամոքելու, անոր ցաւերը սփոփելու փափաքէն մըդեալ՝ զբաղեցան նոր կազմակերպութիւններով ու ամէն ուր որ մարդը գտան հիւանդ կամ կարօտ, գացին անոր տալ պէտք եղած օգնութիւնը: Այսպէս բոլոր կ. Խաչերու առջեւ բացուեցան նոր հորիզոններ, պայքարելու համար մարդկութեան դժբախտութեանց դէմ:

Բարիզի Հ. Կ. Խաչը, վերակազմուած 1921 տարւան վերջը ու գործի սկսած 1922 ին Հայ Տիկնանց հովանաւորութեամբ ու աշխատակցութեամբ, մինչեւ 1925 յուլիս 21 ունեցած է հասոյթ 141,321 ֆր. 80 սանթիմ: Ծախսուած է 87,660 ֆր. 70 սանդիմ: Հայաստան ուղարկուած է 14,166 ֆր. 70 ս. արժէքով դեղ, 2040 ֆր-ի օճառ, 53,000 ֆր. Գամարլուի ճահիճը չորցնելու համար: Ամբողջ գումար 69,206 ֆր. 55 սանդիմ, ուղարկուած Հայաստան: Աթէնք


Ղրկուած է գաղթականներու համար 1252 ֆր. արժէքով դեղ, Ատանա՝ 1000 ֆրանք, գաղթականաց համար, կ. Պօլսոյ Ազգային Հիւանդանոցին 4,600 ֆրանք:

Բարիզի գաղթական հիւանդներուն հայթայթուած է դեղ եւ օդնութիւն, 11,602 ֆրանք: Հոսպէտք է յիշենք թէ 5000 էն աւելի հիւանդներ ձրի խնամուած են ու շատերուն դրամական օդնութիւն եղած է իրենց հիւանդութեան միջոցին: Հազարաւոր հիւանդներ մեր ջանքերով ֆրանսական հիւանդանոցներու մէջ խնամուած են ձրի, ու Հայ Տիկնանց անդամուհիները գացած են հիւանդանոցները, զանոնք մխիթարելու եւ դրամական օդնութիւն ընելու: Հայ կինը չէ մոռցած երբէք իր պարտականութիւնը ու կատարած է զայն շատ ազնուութեամբ:

1922 ին հոկտեմբերին Իզմիրի ահոելի աղետին ատեն բարիզի կ. Խաչը դիմեց հանգանակութեան ու կրցաւ հաւաքել 117,614 ֆրանք, որ մասմբ ղրկուեցաւ Աթէնք, բարեգործականի միջոցաւ ու մասսամբ տրուեցաւ բարիզ հասնող գաղթականներուն, իրենց օրուան հացը ճարելու համար: Այս մանրամասնութիւնք Տիկնանց Միութեան տարեկան հաշուետուութեան մէջ բացատըրւած են լայնօրէն:

Եթէ մեր ջանքերը չեն կրցած ամբողջովին ամոքել բոլոր ցաւերը մեր դժբախտ գաղթականներուն, եթէ չենք կրցած մեր փափաքին համապատասխան կերպով օգնել մեր մայր հայրենիքին սլէտքերուն, մեր կամքէն դուրս ծանր պայմաններ եղած են զմեղ կաշկանդող, որոնց վրայ տուի արդէն հակիրճ տեղեկութիւններ:


Ամէն հայ սակայն պէտք է գայ մեզի օդնութեան: Կը խնդրենք ուրեմն ամէն հայէ որ անդամ գրուի չ. կ. Խաչի, որուն տրուած սանդիմները կրնան կեանքեր ազատել ու ապադիմները կրնան կեանքեր առողջ հայեր, առողջ հայաստանի մը համար:



Հայուսանի կարմիր լոտիկով  
կտորիսի բակիտ ալիսկաք  
ողիղիութեան Առաջնայի վզուսութեան  
գոգը Ո. Օ. Ք.

Հայուսանի կարմիր լոտիկ  
չսիրացաւ  
Բ. Ս. Կամսուրուսին








## ԳԱՐՏԵՍԱՆՑՈՒԹԻՒՆ

(Կարմիր խաչի հիմնարկութիւնները եւ կազմակերպութիւնները)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՐ  
ՀԵՄՆԱՐԿՈՐՉՈՒՆԵՐԻ ԱՐԵՄՆԱՆ 1925:



Հայաստանի կարմիր խաչի ընկերութիւնը կազմակերպւելէ 1920 թւի սկիզբներին նախաձեռնութեամբ մի խումբ հասարակական գործիչների: Ընկերութեան կանոնագրութիւնը այն ժամանակւայ գերագոյն իշխանութեան կողմից հաստատւելուց յետոյ, ընկերութեան անդամների ընդհանուր ժողովն ընտրում է ընկերութեան Գլխաւոր Վարչութիւն, որը եւ մեծ եռանդով անցնում է աշխատանքի: Զնայած երկրի եւ ժողովրդի տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններին, ընկերութեան Վարչութիւնը կարճ ժամանակամիջոցում ցուցադրում է բաւականին արդիւնաւետ գործունէութիւն, որի յաջողութեանը զարկ են տալիս արտասահմանեան իայ գաղութներն իրենց նւիրատւութիւններով, իսկ տեղական ժողովրդի մի մասը՝ իր անդամավճարներով ու այլ միջոցներով: Սըրանց շնորհիւ եւ Վարչութեան անդուլ աշխատանքով յաջողութիւնը է ընկերութեան համար ստեղծել յատուկ միջոցներ ու ձեռք բերել սեփական գոյք (շարժական): Անցնելով կազմակերպչական աշխատանքների, ընկերութեան Վարչութիւնն առաջին հերթին հիմնում է Քէշիշքենդում (Դարալագեազի գաւառ) 20-25 մահճակալ ունեցող մի հիւանդանոց, իսկ նորաշէն կայարանում մի բժշկակայան եւ սննդակայան, որոնց պահպանման համար նա գործադրում է այդ միջոցների մի մասը: Սակայն երբ 1920 թւի աշնանը սկսւում է Հայ-Տաճկական պատերազմը, Վարչութիւնը փակելով այդ նորածիլ հիմնարկութիւնները, բժշկական թուուցիկ խմբեր է կազմակերպում, եւ ապահովելով նրանց դեղորայքով ու անիրաժեշտ պարագաներով, պատերազմի դաշտն է ուղարկում նրանց բժշկական օգնութիւն ցոյց տալու համար վերաւոր եւ հիւանդ զինւորներին:

Աս պատերազմը ամբողջապէս սպառում է ընկերութեան միջոցները: 1920 նոյեմբերի 29-ի յեղաշրջումից յետոյ ընկերութեան գործունէութիւնը դադարում է: Սակայն դա լինում է ժամանակաւորապէս, որովհետեւ երբ յեղաշրջումից եւ տեղի ունեցած քաղաքական կորիներից յետոյ երկրում հաստատւում է Խորհրդային իշխանութիւնը եւ կեանքը երկրում սկսում է ընթանալ նոր ու խաղաղ ուղիով, ապարէզում մնացած կարմիր Խաչի ընկերութեան մի խումբ անդամներ ցանկութիւն են յայտնում նորից վերսկսել ընկերութեան գործունէութիւնը:

Հայաստանի Խորհրդային իշխանութիւնն ընդառաջ գնալով այդ ցանկութեանը եւ քաջալերելով նըրանց այդ նախաձեռնութիւնը, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդի 1921 թւի Խոկտեմբերի 15-ի որոշմամբ նորէն կեանքի է կոչում Հայաստանի կարմիր Խաչի ընկերութիւնը, տալով նրան հասարակական եւ պետական մեծ նշանակութիւն:

Չժիստելով այն հիմնական սկզբունքները, որ նախատեմնուած էին Հայաստանի կարմիր Խաչի ընկերութեան նախկին կառավարութեան կողմից հաստատւած կանոնագրութեան մէջ, Խորհրդային իշխանութիւնը միաժամանակ առաջարկում է նորից վերածմնել կարմիր Խաչի ընկերութեան կանոնագրութիւնը, ելակետ ունենալով ժնեւի 1864 թւականի կոնվէնցիան եւ յետագայում այդ ակտը լրացնող այլ կոնվէնցիաները, միաժամանակ կանոնագրութիւնը յարմարեցնելով մեր երկրի դրութեան, պայմաններին ու պահանջներին:

Ընտրւում է Հայաստանի կարմիր Խաչի գլխաւոր Վարչութիւն, որ վերամշակելով կարմիր Խաչի ընկերութեան նախկին կանոնագրութիւնը, ընդհանուր Ժողովի կողմից ընդունելուց յետոյ, ներկայացնում է այն կառավարութեան ի հաստատութիւն հետեւեալ գլխաւոր կետերով.

1) Պատերազմի ժամանակ օգնութեան հասնել վերաւոր ու հիւանդ զինորներին եւ ռազմագերիներին,

2) Օգնութիւն հաշմանդամներին,  
3) Բժշկական եւ նիւթական օգնութիւն տարերային ու ժողովրդական աղետներից վնասւած աղքաբնակչութեանը,

- 4) Մաքառումն երկրում տիրող սոցիալական ախտերի դէմ, մասնաւորապէս մալարիայի,
- 5) Օգնութիւն անապաստան երեխաներին եւ
- 6) Բժշկա-սանիտարական եւ նիւթական օգնութիւն երկիր վերադարձող գաղթականութեանը:

1922 թւի Մայիսի 24-ին այդ նոր կանոնագրութիւնն ընդունւում է Հայաստանի ժողովրդական կոմիսարների Խորհրդի կողմից, եւ 1924 թւի Մարտի 1ին վերջնականապէս հաստատւում է Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից:

Կարսիր Խաչի առաջին նուիրատուն եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսը որ միաժամանակ տւեց Հայրապետական կոնդակ Կարմիր Խաչի համար եւ 1922 թւին ուղարկեց Երկրորդ կոնդակ արտասահմանի Հայութեան, հրաւիրելով զայն աջակցելու Կարմիր Խաչին: Այժմ էլ մի Երրորդ կոնդակ ուղարկել է, կոչանելով հանուր հայութեան, ամէն կերպ օժանդակել Կարմիր Խաչին:

Հինելով միանգամայն անկուսակցական հասարակական կազմակերպութիւն եւ Վայելելով կառավարութեան ու ժողովուրդի վստահութիւնը, Հայաստանի Կարմիր Խաչի ընկերութեան նոր վարչութիւնը անցնում է գործոն աշխատանքի եւ պետական մարմինների աջակցութեամբ ու իր ներկայացուցիչների եւ հրահանգիչների միջոցով հետզհետէ կազմակերպուս է ընկերութեան մասնաճիւղեր Հայաստանի հետեւեալ գաւառներում. Լենինականում (Նախկին Ալեքսանտրապոլում), Էջմիածնում, Զանգեզուրում, Մեղրիում, Դիլիջանում, Գարալագեազում, Լոռի-Փամբակում եւ նոր Բայազիտում:

Մի եւ նոյն ժամանակ Գլխաւոր Վարչութիւնը կապ հաստատելով արտասահմանեան հայ գաղութների եւ «Հայ Կարմիր Խաչ» անւան տակ գործող ընկերութիւնների հետ, կարողանում է նրանցից մի քանիսին կապել Հայաստանի ֆիարսիր Խաչի հետ, կազմակերպելով դրանց իբրեւ վերջինիս մասնաճիւղեր: Այդպիսի մասնաճիւղեր կազմակերպում են Ամերիկայում, Փարիզում, Մարսելյում, Աթենքում եւ Թաւրիզում:

Արտասահմանի հետ կապ պահպանելու համար Հայաստանի Կարսիր Խաչն իր լիազօրներն ունի

Կ. Պոլսում, բաթումում եւ Մոսկվայում: Սակայն այս բոլորը բաւարար չհամարելով, Գլխաւոր Վարչութիւնը կարեւոր է գտել յատուկ պատգամաւոր ուղարկել արտասահման հայկական գաղութները՝ նրանց ի մօտոյ ծանօթացնելու համար Հայաստանի կարմիր Խաչի գործունէութեան, նրա առաջադրած նպատակների եւ երկրի ու ժողովրդի կարիքների հետ:

Դալով Խորհրդային Հանրապետութիւնների կարմիր Խաչերին, պէտք է յիշել, որ Հայաստանի կարմիր Խաչն անմիջական կապ եւ գործակցութիւն է հաստատել նրանց հետ եւ մտել 1925 թւի Ապրիլի 15ին Մոսկվայում գումարւած Խորհրդային երկիրների կարմիր Խաչերի ընդհանուր ժողովում կազմակերպւած «Կարսիր Խաչերի Միութեան» սէջ, միաժամանակ մնալով մի ինքնուրոյն հիմնարկութիւն (միաւոր):

Հայաստանի կարմիր Խաչը *de facto* ճանաչւած է եւ կարմիր Խաչերի Միջազգային կոմիտէի կողմից, թէեւ նա, ի թիւս այլ Խորհրդային կարմիր Խաչերի, դժբախտաբար հնարաւորութիւն չունեցաւ մասնակցելու 1923 թւի օգոստոսին ժնեւում կայացած միջազգային խորհրդաժուղովին, ուր նա հրաւիրւած էր որպէս ինքնուրոյն միաւոր: Սակայն գլխաւոր Վարչութիւնը մտահոգւած է եղել կարմիր Խաչերի միջազգային կենտրոնական կուսիտէի կողմից եւ *de jure* ճանաչւելու ինդրով, ու այդ ուղղութեամբ նա աշխատել է մինչեւ օրս: Վարչութիւնն այդ հարցը յարուցել է եւ 1925 թւի մայիսին Մոսկվայում եւ աւելի քան հաւատացած է, որ մօտիկ ապագայում, շնորհիւ Խորհրդային Միութեան կառավարութեան կողմից ձեռք առած միջոցների, այս հարցն եւս կստանայ իր դրական լուծումը:

---

Անցնելով ժողովրդին օգնութիւն հասցնելու իր վրայ վերցրած բարձր պարտականութիւնների իրագործմանը եւ ի նկատի ունենալով որ իւր գործունէութեան մեծ մասը պէտք է ծառայի ժողովրդի առողջապահական դրութեան բարձրացման, որի մասին առանձնապէս հոգում է եւ մի յատուկ Պետական Մարմին, այն է Առողջապահական ժողովրդական կոսիսարիատն իր տեղական մարմիններով՝ Հայաստանի կարսիր Խաչը որոշում է իւր

բժշկական օգնութիւնը տարածել բացառապէս կենտրոնից կտրւած երկրի աւելի հեռու ու յետամնաց անկիւններում եւ առաւելապէս այն վայրերում, ուր այս կամ այն հիւանդութիւնները (մասնաւորապէս մալարիան) աւելի են տարածւած եւ աւերումսեր են գործում:

Հայաստանի կարմիր Խաչի Գլխաւոր Վարչութեան սկզբնական շրջանի հոգսերից մէկն է եղել Միջագետքից եկած 7,000 գաղթականների առողջապահական դրութեան բարելաւումը: Այդ նպատակով Վեդի-Բասարի շրջանի, ուր տեղաւորուած էին այդ գաղթականները, Բոյուք-Վէդի գիւղում 1922 թւի Յունիսի 25ին նա ժամանակաւորապէս բաց է անում մի բժշկակայան, որը պէտք է բժշկական օգնութիւն ցոյց տար վերոյիշեալ շրջանի բոլոր հիւանդներին:

Այդ բժշկակայանն իր գոյութեան տասն մէկ ամսւայ ընթացքում բժշկական օգնութիւն է հասցըրել 5,054, հիւանդի, որոնցից ըստ տեղեկագրի 95% տառապելիս է եղել մալարիայով: Բժշկական օգնութիւնից զատ Գլխաւոր Վարչութիւնը ձմռան օրերին վերոյիշեալ գաղթականութեանը բաժնել է եւ հագուստեղին ու կօշիկներ:

Հետեւեալ խնդիրը, որով մտահոգւած էր Հայաստանի կարմիր Խաչը, դա պատերազմից յետոյ ծանր վիճակի հասած Զանգեզուրի ժողովուրդին օգնութեան ձեռք մեկնելու կարեւոր նարցն էր:

Այդ ժամանակ Զանգեզուրը մատնւած էր սովի եւ զանազան հիւանդութիւնների, սակայն կենտրոնից հեռու եւ հաղորդակցութեան յարմար միջոցների բացակայութեան շնորհիւ, այդ գաւառի դրութիւնը հետզիետէ աւելի էր ծանրանում եւ օգնութիւնն աւելի դժւարանում:

Զնայած այդ բոլոր խոչընդոտներին, 1922 թւի Օգոստոսին Գլխաւոր Վարչութիւնն այնուամենայնիւ կարողանում է Զանգեզուրում կազմակերպել տեղական մասնաճիւղ որի մասնակցութեամբ նա բաց է անում Զանգեզուրի գաւառի ղարագիլիսէ գիւղում բժշկակայան, իսկ Տեղ գիւղում բուժակակայան, որը 1925 թւին վերածում է բժշկակայանի: Այս երկու բժշկակայաններն էլ իրենց կազմակերպման օրից մին-

չեւ այժմ անընդիատ աշխատել են գլխաւոր վար-  
չութիւնից ստանալով Թէ՛ դեղորայք եւ Թէ պահպա-  
նութեան իամար միջոցներ:

Ահա Թւական տւեալներ այդ բժշկակայաններում գտնուած իիւանդների մասին.

Տոկոսային հաշտով այդ հիւանդութիւնների մէջ մալարիան կազմում է 46%, իսկ քոսը 20%: Գնայած նրան, որ վերոյիշեալ երկու բժշկակայանները հնարաւորին չափ բժշկական օգնութիւն են ցոյց տալիս թէ՛ երթեւեկ հիւանդներին, որոնք յաճախում են բժշկակայանները, թէ տներում գտնւած ծանր հիւանդներին, որոնց այցելում է բժշկական կազմը որը ընդհանրապէս հիւանդներին տեղում օգնութիւն ցոյց տալու նպատակով պարբերաբար այցելում է շրջանի միւս գիւղերը, այնուամենայնիւ այս շրջանում մըշտական հիւանդանոցների մեծ կարիք է զգացւում: Սրա մասին քանից դիմումներ են եղել թէ՛ Զանգեզուրի մասնաճիւղի Վարչութեան եւ թէ ժողովուրդի կողմից, սակայն գլխաւոր Վարչութիւնը մինչեւ օրս դրամական հնարաւորութիւնից գուրկ է եղել բաւարելու այս կարեւոր պահանջը, եւ այս հարցի դրական լուծումը հերթի է դրւած գլխաւոր Վարչութեան առաջ, առաջիկայ տարում:

Բացի գուտ բժշկական օգնութիւն հասցնելուց, բժշկական կազմն այդ շրջաններում, ինչպէս երեւում է զեկուցումներից, տարել եւ շարունակում է տանել նաեւ Սանիտարա-Լուսաւորչական աշխատանքներ, դասախոսութիւնների եւ զրոյցների միջոցով՝ ծանօթացնելով ազգաբնակութեանն առողջապիտական կանոնների եւ տարածւած ու տարափոխիկ հիւանդութիւններից պաշտպանելու միջոցների հետ:

Ինչպէս վերեւում յիշւած է, պատերազմից յետոյ շնորհիւ անքերութեան, Զանգեզուրի շրջանը մատնւած էր սովի եւ այդ պատճառով անիրաժեշտ էր համարւում այնտեղ կազմակերպել սննդակայաններ: Այդպիսի սննդակայան-ճաշարաններ կարմիր Խաչի հաշւին կազմակերպւում են՝ Տաթեւում, Մուղանջարում եւ Բայանդուրում, ուր չքաւոր ժողովուրդը ծրիաբար ստանում էր սնունդ: Միաժամանակ այդ շրջաններում ժամանակաւորակէս բացւում են եւ ձրի բաղնիքներ, որոնց գոյութիւնը տեւել է մինչ եւ 1923 թիւը:

Նոյն 1923 թւի օգոստոս ամսում կազմակերպւում է եւ Հոռիքամբակ գաւառի մասնաճիւղը եւ

կարճ ժամանակից յետոյ այդ մասնաճիւղի ջանքերով ու գլխաւոր վարչութեան օժանդակութեամբ թէ՛ դեղորայքով եւ թէ դրամով՝ կազմակերպւում եւ սեսլտեմբեր ամսուց սկսում է աշխատիլ շրջանի գիւլագարագ գիւղում մի բժշկակայան, որը գործում է մինչեւ յաշորդ տարւայ մայիս ամիսը: Այդ ժամանակաշրջանում բժշկական օգնութիւն է տրւում 3,071 երթեւեկ հիւանդի, իսկ տներում 1,054 հիւանդի: Հիւանդութիւնների մեծամասնութիւնը մալարիա է եւ քոս:

Սակայն 1923 թւի մայիսի վերջերի այս բժշկակայանը փակւում է շնորհիւ այն հանգամանքի, որ առողջապահական ժողովրդական կոմիսարիատը, լայնացնելով իր բժշկական հիմնարկների ցանցը, ապահովում է այս շրջանի բժշկական օգնութեան գործը, որով կարմիր Խաչի բժշկակայանը գոյութիւնն այդ շրջանում համարւում է աւելորդ:


Լոռի-Փամբակ գաւառի ֆամբակի շրջանի հետազոտութիւնները ցոյց են տւել, որ այդ շրջանի միքանի գիւղերում տարածւած է սիֆիլիս հիւանդութիւնը, որ ժառանգութիւն է մնացել տաճկական պատերազմից: Այս հիւանդութեան առաջն առնելու եւ հիւանդներին բժշկելու նպատակաւ շայաստանի կարմիր Խաչի Գլխաւոր վարչութիւնը այս տարւանից ծեռնարկել է այդ հիւանդու շրջանի մասնագիտական բժշկական օգնութեան: Ազգաբնակութիւնը, խորը գիտակցելով այդ հիւանդութեան վնասակար լինելը եւ նրա տարածման առաջն առնելու անհրաժեշտութիւնը, ինքը ընդառաջ է գնացել կարմիր Խաչի վարչութեան այդ ծեռնարկութեան, գնել է Մեծ-Փառնի գիւղում մի ընդարձակ շէնք եւ տրամադրել այն կարմիր Խաչին բժշկակայան բանալու համար: Այդ շէնքի վերանորոգումից, հիւանդանոցի համար յարմարացնելուց եւ կահաւորելուց յետոյ, այդ գիւղում բացւում է վեներական բժշկակայան մասնագիտ բժշկի գլխաւորութեամբ, իսկ մինչ այդ՝ տեղական մասնաճիւղին վարչութիւնն օժանդակել եւ օժանդակում է դեղորայքով:

ՀՀԿ ԱՆԴԱՆԵՐԻ ՏԱՐԺՈՒՄ  
ԲԺՇԿԱԿԱԿԱՆ ԽԵՂՈՒՄ 1994:

ԴՐԱՄԱԿԱՆ ԽԵՂՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԺՈՒՄ 1995:

ՏԱՐԺ



■ - ՀԱՎԱԼԱՐԱՆ ԸՆԴ. ԳԵՎՈՒ.

■ - ՔԱՂԱՔԱՆ ՀԻՎԱՆԱԴ.

■ - ՄԱԿԱՐԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԺ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԺ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶ:

ՀԱՐԱԳԻՎԻՑԻ ԳՅՈՒՂԻ (ՄԻՒԱՆԻ ՏՐ  
ԲԺՇԿԱԿԱՅԱՆ):

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆ 1925 թ.

ԱՌԱՋԻ ԿԻՍԱՄՅԱԿԻՆ:

1626

1479

915

780

135

ՅՈՒՆԿԱՐ

609

515

94

ՓԵԶՐԿԱՐ

735

612

123

ՄԱՐՏ

707

547

160

Ա.ՊՐԵԼ

889

753

136

ՄԱՅԻՍ

154

ՅՈՒՆԻ

■ - ՀԻՎԱՆԴՆԵՐԸ ԸՆԴԳՈՒՄԱՐԸ ■ - ԶԱԿԱԶԱԿՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԸ ■ - ՄԱԼԱՐԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶ:

ՏԵՂ ԳՅՈՒՂԻ (ԶԱԿ  
ԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՐ) ԲԺՇԿԱԿԱՅԱՆ

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆ 1925 թ. I-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻՆ:

557

358

253

105

ՅՈՒՆԿԱՐ

440

256

84

ՓԵԶՐԿԱՐ

450

332

118

ՄԱՐՏ

403

255

148

Ա.ՊՐԵԼ

365

224

141

ՄԱՅԻՍ

ՅՈՒՆԻ

■ - ՀԻՎԱՆԴՆԵՐԸ ԸՆԴԳՈՒՄԱՐԸ ■ - ԶԱԿԱԶԱԿՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԸ ■ - ՄԱԼԱՐԻԱ

Բացի այդ, Գլխաւոր Վարչութիւնն իր գործունէութեան առաջին ժամանակաշրջանում բացել է եւ մի քանի վայրերում ժամանակաւոր բնոյթ կրող բժշկակայաններ, որոնք աշխատել են այնքան, որքան նրանց գոյութիւնն անհրաժեշտ է եղել տեղական կարիքներին գոհացում տալու համար, որից յետոյ նրանք փակւել են: Այդպիսիներից են Դիլիջանի Զարիսել գիւղի բուժակայանը, որը 1684 հիւանդ է ունեցել եւ կոտայքի շրջանի Քանաքեռ գիւղի բժշկակայանը, որն իր վեցամսեայ գոյութեան ժամանակաշրջանում ունեցել է 4273 հիւանդ: Վերջինիս Փակւելու դրդապատճառը եղել է այն, որ կոտայքի շրջանը բժշկական օգնութեամբ Առողջապահական Ժողովրդական կոմիսարիատի կողմից համեմատաբար աւելի է ապահոված եղել, մինչդեռ կան այնպիսի վայրեր, որոնք կարու են այդպիսի օգնութեան: Այդպիսիներից է օրինակ Դարալագեազի գաւառի Արփա գիւղի շրջանը, ուր եւ յետագայում տեղափոխւել է Քանաքեռ գիւղի բժշկակայանը:

Բացի հիւանդութեան տեսակետից կարեւոր վայ-  
ըերին օգնութիւն իամնելուց, չայաստանի կարմիր  
խաչի գլխաւոր զարչութեան յատուկ մտահոգութեան  
առարկան է եւ գիտնականօրէն հիմնաւորւած մա-  
քառում կազմակերպել տրոպիկական հիւանդութիւն-  
ների դէմ — այդ հիւանդութիւններով վտանգւած  
վայրերում։ Այդ նպատակով նա, դեռ 1923 թւին կազ-  
մակերպելով էջմիածնի գաւառային մասնաճիւղը, նոյն  
թւի ամառւայ ամիսներում կազմել է եւս երկու բժշ-  
կական խումբ եւ ուղարկել էջմիածնի գաւառի Սա-  
մաղարի ու Զանգիբասարի շրջանները բժշկական օգ-  
նութիւն հասցնելու համար տեղական բնակչութեան,  
մաքառելով գլխաւորապէս մալարիայի դէմ։

Յունիսի 14ից իւր աշխատանքները սկսել է Սամաղարի շրջանի խումբը, որի կազմն է մի բժիշկ, երեք բուժակ, եւ մի գթութեան քոյր: Կենտրոնակայրը ունենալով ջէյվա գիւղը, խումբը շարունակ շրջում է բոլոր գիւղերը, տեղն ու տեղը օգնութիւն է ցոյց տալիս ազգաբանակութեանը եւ կազմակերպե-

լով դասախոսութիւններ մալարիայի մասին, միաժամանակ այդ բժշկախումբը հրահրում է գիւղացիութեանը մաքրել առուները, չորացնել ճահիճները եւ այլն: Այս խմբի գործունէութեան ժամանակաշրջանում, այն է՝ 1923 թւի յունիսի 14-ից մինչեւ հոկտեմբերի 15ը, բժշկական օգնութիւն են ստացել ընդաէնը 15256 հիւանդ, որոնցից մալարիայով հիւանդներ եղել են 9486, իսկ սիւս հիւանդութիւններով բռնւած — 5770, ուրեմն մալարիկներն կազմում են 62,2%:

Նոյն այդ ժամանակաշրջանում (յունիսի 14-ից մինչեւ հոկտեմբերի 15-ը) էջմիածնի գաւառ ուղարկած երկրորդ բժշկական խումբը, բաղկացած մէկ բժշկից, երեք բուժակից եւ մէկ գթութեան քրոջից, աշխատել է ջանգիպասարի շրջանում, կենտրոն ունենալով սկզբում Սարվանլար գիւղը, ապա Ղարաղլախ իսկ յետոյ Խաթունարիս գիւղերը:

Սա ընդունել է 17173 հիւանդ, որոնցից 9746 (56.7%) բռնւած մալարիայով:

Ամէնուրեք այս խումբերը միաժամանակ կազմակերպել են եւ դասախոսութիւններ մալարիայի մասին: Բացի զուտ, բժշկական եւ Սան. - Լուսաւորչական աշխատանքներից, այս խումբերը կատարել են եւ գիտական աշխատանքներ, իետազոտելով մի քանի հարիւր մալարիկների արիւնը, ինչպէս եւ ուսումնասիրելով տեղական մոժակների տեսակներն ու նրանց վնասակարութեան աստիճանը:

1923 թւին էջմիածնի գաւառն ուղարկած երկու բժշկական խմբերի գործունէութիւնը, իետազոտութիւնները եւ զեկուցումները ցոյց են տալիս, որ էջմիածնի գաւառը մալարիայի տեսակետից ամենավտանգաւոր վայրերից մէկն է: Այստեղի ազգաբնակչութեան զգալի մեծամասնութիւնը շարունակ տառապում է մալարիայով, որ աւելի եւս սաստկանում ու սուր կերպարանք է ստանում դաշտալին աշխատանքների ամենաեռուն ժամանակ, զրկելով գիւղացուն այդ ժամանակամիջոցում աշխատունակութիւնից, որով ոչ միայն քայլքայում է նրա առողջութիւնը այլև մեծ վնաս է հասցնում նրա տնտեսութեանը:

Ի նկատի ունենալով այս կարեւոր հանգաման-

քը, չայաստանի կարմիր եազի գլխաւոր գարչութիւնը որոշել էր յետագայ տարում մալարիայի դէմ պայքար կազմակերպել աւելի գիտականօրէն եւ գործնական աւելի շօշափելի արդիւնքներով:

Եւ իրօք, 1924 թւին նա շնորհիւ Ամերիկայի մասնաճիւղի ուղարկած նպաստների, գաւառի կենտրոն էջմիածնում կազմակերպում է տրոպիկական հիւանդութիւնների բժշկակայան՝ 10 մշտական մահճակալով, լավորադորիայով ու երթեւեկանոցով:

Սկսելով իւր գործունէութիւնը 1924 թւի յունիսի 1ից, այս կայանը առաջի հերթին անցնում է հետագոտական աշխատանքների: Հետազօտական այդ աշխատանքների շնորհիւ կայանը պարզեց մալարիայի եալիդէմոլոգիայի եւ նրա տարածման վերաբերեալ հետեւեալ տւեալները. ա) այս շրջանում չափազանց տարածւած են 1) *Anopheles maculipennis* մոծակը, 2) *Anopheles pseudopictus*, վերջինս խիստ տարածւած գլխաւորապէս այն վայրերում, ուր ճահիճներն առատ են եղեգներով: Խիստ տարածւած են նմանապէս *Culex*-ը: Շրջանում ամէնուրեք գտնուում են եւ *Plebotomus*-ի հետեւեալ տեսակները՝ 1) *Phlebotomus papatacci* 2) *Plebotomus perniciasus* եւ 3) *Phobotomus minix*.

Հետազօտութիւնն երեւան է իանել եւ այլ մանրամասնութիւններ, որոնք զուտ գիտական նշանակութիւն ունին: Ամառւայ ընթացքում հետազօտման է ենթարկել շրջանի մի քանի վայրերի ամբողջ ազգաբնակութիւնը, որի հետեւանքով պարզել է, որ մալարիան շրջանում տարածւած է 100 %: Մասսայական հետազօտութիւնը նպատակ է ունեցել պարզել վայծախային եւ Ռոսսի ինդէնքսները. ընդամէնը հետազօտւած են 2505 հոգի, որոնց ընդիանուր վայծախային ինդէքսը — 64.9-ի, Ռոսսինը = 4-ի: Հետազօտման ընթացքում ուշադրութեան է առնւած եղել իամեմատական վարակումն ըստ իասակի եւ պարզել է որ ամէնից բարձր ինդէքս ինչպէս վայծախին, նոյնպէս եւ Ռոսսինը վերաբերում է 6 — 15 տարեկան իասակին:

Մալարիայով հիւանդներին բժշկական օգնու-

Թիւն տրւել է տրոպիկային ամբուլատորիայում եւ մալարիական խմբերում, որոնք գործուղղութ են կայանի կողմից զանազան շրջաններ: Ցանախորդներ եղել են գիւղացիութիւնը, ծառայողները, բանւորները ու գաղթականները:


Էջմիածնի տրոպկայանի երթեւեկանոցի յաճախորդների թիւը 1924 թւի յունիսի 1-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը հետեւեալ թւական պատկերն ունի.

Ա.ՄԻ.Ս	Մալարիկներ		Այլեւայլ հիւ.		ԸՆԴԱՄԵՆԸ
	Առաջ.	Կրկնակ.	1-ին	Կրկնակ.	
Յաճախ.	Յաճախ.	Յաճախ.	Յաճախ.	Յաճախ.	Յաճախ.
Յունիս	237	668	90	76	1071
Յուլիս	394	2204	68	7	2673
Օգոստ.	417	2340	76	33	2866
Սեպտ.	429	1924	115	40	2508
Հոկտ.	461	1505	73	4	2043
ԸՆԴԱՄ.	1938	8641	422	160	11161

Այս թւերը վերաբերում են հիւանդների շարժմանը միմիայն մալարիայի ժամանակաշրջանում, մինչդեռ տրոպկայանն իր գործունէութիւնը շարունակել է եւ յետագայում, ունենալով 1924 թւի նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներում հետեւեալ քանակութեամբ հիւանդներ.


Ա.ՄԻ.ՍՆ.	Մալարիկներ		Այլեւայլ հիւանդ.		ԸՆԴԱՄԵՆԸ
	առաջին	կրկնակ.	Առաջ. եւ կրկնակ	յաճախ. յաճախ.	
				յաճախորդ	
Նոյեմբ.	283	946		28	1257
Դեկտեմ.	226	988		19	1233
ԸՆԴԱՄ.	509	1934		47	2490

**ՀԱՅԿԱՏՈՍՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՅՔ**  
**ԵԶՄԻԱԾՆԻ ՏՐՈՊԿԱՅԱՆ**  
**ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆ 1924 թ.**




— - Մալարիա      — - Մալարիկն. առաջ. այց.      — - Զանապան. հիվանդ.

**ԵԶՄԻԱԾՆԻ ՏՐՈՊԿԱՅԱՆ**  
**ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԵԽԵՐԺՈՒՄՆ 1925 թ.**



— - Մալարիա      — - Մալարիկն. առաջ. այց.      — - Զանապան. հիվանդներ

# ԵԶՄԻԱԾՆԻ ՏՐՈՊԻԿԱԿԱՆ ԿԱՅԱՆ ՄԱԼԱՐՄԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ 1924 թ.




■ - Սամարկանի ԽՈՒՄԲ  
□ - Հարուստի ԽՈՒՄԲ

■ - Խալաբինակի ԽՈՒՄԲ  
□ - Փիրուքարի ԲԺՇԿԱԿԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶ:

**ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ 1924 թ.  
ԱՄԱՌԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ:**

ԵԶՄԻԱԾՆԻ ՏՐՈՊ. ԿԱՅԱՆ



■ - ՄԱԼԱԿԻԿԱՆԵՐԻ ՏԱԴԱՉՈՒ ԱՅՑԵԼ  
■ - ՄԱԼԱՐՄԱՅԻՆ ԿՐԿՆԱԿԻ ԱՅՑԵԼ  
■ - ԶԱՐԱԿԱՆ ՀԻՎԱՆՅՈՒԹՅՈՒՆԸ

Մալարիական շրջիկ խմբերը, որ կազմակերպւած են եղել եւ էջմիածնի տրոպկայանին կցւած, շրջան են դուրս եկել միայն Յունիսի վերջերին, երբ վերջացած էին կայանի կազմակերպման եւ նախնական հետազօտական աշխատանքները։ Այդ խմբերին շրջիկ բնոյթ է տրւել, որովհետեւ նրանք, տեղափոխւելով մի տեղից միւս տեղ, յաճախ միեւնոյն տեղում մնացել են առնուազն 12 օր, երբեմն 1-2 ամիս։ Սկզբում ծրագրւած է եղել ունենալ միայն 2 խումբ, բայց շուտով, ընդառաջ գնալով գիւղացիութեան բազմաթիւ դիմումներին, կազմակերպւել են եւս երկու խմբեր, որով ուրեմն տրոպկայանին կից գոյութիւն են ունեցել 4 մալարիական խմբեր, որ միշտ աշխատել են տրոպկայանի ղեկավարութեամբ, ստանալով վերջինից անհրաժեշտ դեղորայք եւ պարագաներ։

Մալարիայի ժամանակաշրջանում կայանի շրջիկ խմբերը աշխատել են հետեւեալ վայրերում

ԽՄԲԵՐԻ ԱՆՈՒՆ	ՈՐ ԳԻւղերում ԵՆ   ԿԻՆ Հ Ժ Ա Մ Ա Ն Ա Գ Ո Ւ Մ   ՔԱՆԻ Ա Շ Խ Ա Տ Ե Լ		
ԶԵՂՎԱՅԻ ԽՄԲ.	Ն.- ԶԵՂՎԱ ՍԱՄԱԴՎԱՐ Ն.- ԶԵՂՎԱ	27/6 — 1/8 1/8 — 12/10 13/10 — 24/10	33 73 12
ԽԱԹՈՒՆԱՐԽԻ	Ն.- ԽԱԹՈՒՆԱՐԽ Բ.- ՍԵՋՄԱՆՂՎԱՐ ՍԱՐՎԱՆԼՎԱՐ	2/7 — 1/10 1/9 — 1/10 7/10 — 22/10	60 30 14
ՂԱՐԽՈՒՆԻ ՓԱՐԱՔՎԱՐԻ	Էջմ. ԿԱՅԱՐԱՆ ՓԱՐԱՔՎԱՐ ՂԱՐՎԱՂԼՎԱԴ	7/8 — 23, 9 25/7 — 13/9 15/9 — 25/10	46 50 40

Իսկ հիւանդների շարժումը երեւում է հետեւեալ տախտակից։ \*

ԽՄԲԵՐԻ ԱՆՈՒՆ	Մալարիկներ		ՄԻՒՍ ՀԻՒԱՆԴ.		ԸՆԴԱՄ.
	ԱՌՉ. յան.	ԿՐԿՆ. յան.	ԱՌՉ. յան.	ԿՐԿՆ. յան.	
ԶԵՂՎԱՅԻ ԽՄԲ.	1923	4137	2395	714	9169
ԽԱԹՈՒՆԱՐ. »	1425	4247	2714	1501	9887
ՂԱՐԽՈՒՆԻ »	701	1631	390	383	3105
ՓԱՐԱՔՎԱՐԻ ԽՄԲ.	1435	3088	—	—	4523
	5484	13103	5499	2598	16684

Թէ ինչ շարժումն ունին հիւանդների ամսէ ամիս  
բոյոր շրջիկ խմբերում— տրոպկայանի ամպուլա-  
տորիայի հետ միասին, դա պարզում է մեզ ստորեւ  
զետեղութ տախտակը իր թւական տւեալներով՝

Մալար.	Սրանցից	Միւս հիւանդներ	ԲՈԼՈՐ		
Ընդհան.	Առաջին	Ընդհան.	Առաջին Յանախ.		
Յանախ.	Յանախ.	Յանախ.	Յանախ.	Թիւը	
Յունիս	905	237	166	90	1071
Յուլիս	6020	1266	1890	1335	7910
Օգոստ.	9757	2553	2900	1888	12657
Սեպտ.	8001	2167	2488	1736	10488
Հոկտ.	4483	1300	1138	873	5621
Նոյեմ.	1257	203	8628		1285
Դեկտ.	1007	226	19		1026
	31430	8031	8629	5922	40059

Այսպիսով Տրոպկայանի եւ նրա խմբերին դիմում  
են արել 8031 մալարիկ, որոնք յանախել են 31430  
անգամ. բացի մալարիկներից, զանազան հիւանդու-  
թիւններով դիմել են 5922 հոգի, որոնք ունեցել են  
8629 յանախում: Եթէ ընդունենք, որ այդ շրջանը, ուր  
տրոպկայանը գործել է իւր խմբերով, մօտ 30,000  
ազգաբնակութիւն ունի, ապա վերոյիշեալ թւերից  
ակնյայտնի է որ ազգաբնակութեան մօտ 26%-ը դի-  
մել է միմիայն մալարիայի դէմ օգնութիւն ստանա-  
նալու համար, իսկ մնացած բոյոր տեսակի բժշկա-  
կան օգնութիւն ստանալու համար դիմել է ազգա-  
բնակութեան մօտ 20 0/0, ուրեմն ազգաբնակութեան  
46% դիմել է կարմիր Խաչի հիմարկութիւններին:

Տրոպկայանի ստացիոնարը, որ ունի 10 մշտական մահճակալ, 1924 թվին 7 ամսւայ ընթացքում ունեցել է 77 հիւանդ, որ կազմում է 1386 մահճակալ-հիւանդանոցային օր:

Ստացիոնարում տեղաւորւում են այն հիւանդները, որոնք առանձնապես հետաքրքիր են իրենց հիւանդութեան տեսակով եւ այն գիւղացիները, որոնք ծանր հիւանդ են եւ եկած են հեռու գիւղերից: Ստացիոնարում գործ են դրւում մալարիկների բուժման զանազան տեսակները, ուր բացի քինինից գործադրւում է նէսալվարզան:

Ոչ մի կերպ հնարաւոր չէր ամբողջ ազգաբնակութեանը քինինիցացիայի ենթարկել 1924 թվին, որովհետեւ այդ նպատակի համար կարմիր Խաչը չունէր բաւարար քանակութեամբ քինին, ուստի պըոֆիլակտիկ քինինիցացիայի ենթարկւել է միայն կայանների անձնական կազմը:

Էջմիածնի տրոպկայանի լաբորատորիան բաւականին լաւ կահաւորւած է եւ ունի բոլոր անհրաժեշտ պարագաները բազմատեսակ կլինիկական հետազոտութիւններ կատարելու համար եւ գլխաւորապես հետազոտում է հիւանդների արիւնը պարագիտների ներկայութեան նկատմամբ, ինչպէս եւ նրանց մէզը կղկղանքը՝ վէրքերի արտադրութիւնները, խորխ եւն:

1924 թվին 7 ամսւայ ընթացքում այդ լաբորատորիյայում հետազոտւել է 1453 հիւանդի արիւն: Լաբորադորիյայում հետազոտում եւ ուսումնասիրում են մոժակների եւ նրանց թրթուրների զարգացումը, հետեւում են նրանց կենսական առանձնայատկութիւններին: Ուսումնասիրութեան հետեւանքները ցուցադրւում ու պարզաբանում են նաև կայանի յանախորդներին: Բացի այդ ցուցադրւում են եւ մոժակների կազմութիւնը, պարագիտները եւ արիւն ծծող ու թունաւոր միջատների խմբաւորումները (կոլէկցիաներ) եւայլն:

Ինչ վերաբերում է պըոֆիլատիկային, պէտք է նկատել, որ այդ տեսակետից գլխաւոր ուշադրութիւնը դարձւում է բնակչութեան ինքնագործունէութեան

բարձրացման վրայ: Այդ նպատակով շրջանի բոլոր գիւղերում մի քանի անգամ կարդացւել են դասախոսութիւններ եւ գիւղացիների համար կազմակերպել են զրոյցներ մալարիայի էռւթեան, նրա ծագման եւ նրա դէմ կոււելու միջոցների, ինչպէս եւ կանոնաւորապէս բժշկւու ամիրաժեշտութեան մասին:

Բացի մալարիայից, դասախոսութիւնների նիւթէին կազմում, ինչպէս եւ այժմ կազմում են նաեւ զանազան փարակիչ հիւանդութիւններ եւ առողջապահութեան զանազան ճիւղեր: Ազգաբնակութիւնը մեծ հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի նման դասախոսութիւնները: Իբրեւ արդիւնք այդ դասախոսութիւնների, ազգաբնակութիւնը կարմակերպել է համայնական աշխատանքներ եւ չորացրել է փոքր ճահիճները:

Էջմիածնի տրոպիկայանը ո՞չ միայն մի օրինակելի բուժական հիմնարկութիւն է սովորական տիպի, այլ եւ նա հանդիսանում է տրոպիկական հիւանդութիւնների հետազօտման եւ ուսումնասիրութեան մի գիտական կենտրոն էջմիածին գաւառում. ինչպիսին երեւանի Տրոպիկական ինստիտուտն է համահայաստանեան չափով:

1924 թւի մալարիայի սէզօնում կատարած իր հետազօտութիւնների եւ գիտական աշխատանքների տւած արդիւնքների հիման վրայ էջմիածնի տրոպիկայանն եկել է այն եղբակացութեան, որ 1) էջմիածնի գաւառի ջանգիբասարի եւ Սամաղարի շրջանները, նրանց ծայր աստիճանի ճահճացման հետեւանքով պիտի համարել մալարիայի տարածման տեսակետից չայստանի աչքի ընկնող վայրերից մէկը, 2) ընդհանրապէս մալարիայով տառապում էր եւ այժմ էլ տառապում է ընակչութեան 100 0/0ը, իին մալարիան, որ յաճախակի կրկնակի փարակումներ է տալիս եւ աւելումներ է անում, գոյութիւն ունի նոյնպէս խոշոր չափերով: Նոր (սկզբնական) մալարիան համարեայ բացառապէս տարածւած է երեխաների մէջ, սկսած ծծկիրներից, 3) լայն մաշտաբով ծեռնարկած մելիօրատիւ այն աշխատանքները, որոնք նպատակ ունին շրջանում ճահիճները չորացնել, կարող են շրջանի մալա-

ըիան արմատից միանգամայն կտրել, կամ գոնէ մինի-  
մալ չափերի հասցնել այդ հիւանդութեան դէպքերը,  
4) Հակամալարիական պայքարի ատպարիզում խիստ  
մեծ նւանումներ կունենայ ժողովրդական կոմիսար-  
ների խորհրդի այն դէկրէտի կիրառումը կեանքի մէջ,  
որ չալթուկի մշակման եւ ուոգող առուներին է պատ-  
կանում:

Անկասկած վերեւում յիշւած նկարագրութիւննե.  
ըով չի սահմանափակւում էջմիածնի Տրոպկայանի  
գործունէութիւնը: Նա շատ աւելի մեծ ծաւալով աշ-  
խատանքներ է կատարել, որ զուրկ չեն զուտ գիտա-  
կան հիմունքներից: Այս տեսակէտից նա, ինչպէս վե-  
րեւում նկատեցինք, հանդիսանում է երեւանի Պետա-  
կան Տրոպիկական հիւանդութիւնների գիտական ինս-  
տիտուտի մի մասը, Միանգամայն շաղկապւած նրա  
իետ իր գործունէութեամբը: \*Թէեւ էջմիածնի այս տրոպ-  
կայանի գործունէութեան այս համառօտ ակնարկը  
վերաբերում է գլխաւորապէս ամառւայ՝ այն է յու-  
նիսից մինչեւ նոյեմբեր ամիսներին, սակայն նա չի  
դադարեցը իր աշխատանքները եւ տարւայ միւս  
եղանակներին: Նա շարունակ պայքարել է մալարիա-  
յի դէմ եւ ծմեռը, ոչ միայն բժշկական օգնութիւն  
հասցնելով հիւանդներին, որոնց քանակը բնականա-  
բար ծմեռը եղել է սլակաս, այլ եւ ոչնչացնելով մա-  
լարիա տարածող մոծակներին ու սրանց բները. որ  
գլխաւորապէս տեղաւորւած են լինում գոմերում, ներք-  
նայարկներում եւ այլ նման տեղերում:

Էջմիածնի տրոպկայանի 15 հոգուց բաղկացած  
անձնական կազմը, իր վրայ դրւած պարտականու-  
թիւնները կատարել է ասենայն բարեխղճութեամբ: Թէ՝  
բժիշկները եւ Թէ միջին կազմը, նախ քան իրենց աշ-  
խատանքներին անցնելը, ստացել են մասնագիտական  
պատրաստութիւն Թէ՛ Մոսկւայի Տրոպիկական Ինստի-  
տուտում ու Կլինիկայում եւ Թէ Երեւանի Ինստիտու-  
տում ու Կլինիկաներում:

1924 թւից էջմիածնի Տրոպկայանի կազմակերպման եւ պահպանման համար ծախսւած է ընդամենը 13684 ռ. 31 կ., որից շենքի վերանորոգութեան եւ կա-

հաւորման համար ծախսուած է 3816 ռ. 03 կ., անձնական կազմի ռոնիկը 4051 ռ. 13 կ. Եւ դեղորայք 3645 ռ. 59 կ., իսկ մնացածը 2171 ռ. 56 կ. ծախսուած է ընթացիկ կարիքների՝ այն է հիւանդների սննդի, տնտեսական պահանջների, փոխադրական միջոցների վրայ եւայլն:

Անցնելով էջմբաճնի Տրոպկայանի գործունէու. Թւեանը 1925 թւի ընթացքում, ովէտք է նկատել, որ այս թւի ծմբան եւ գարնան ամիսներում, նրա գործունէութիւնը ընականաբար թոյլ է եղել, ինչպէս այդցոյց են տալիս թւական տւեալները; 1925 թւի մալարիայի սեղոնը սկսուելուն պէս այդ Տրոպկայանից պահանջւում էր լաբւած աշխատանք, շարունակելու համար, անցեալ տարւայ գործունէութիւնը: Անցեալ տարւայ վործը ցոյց էր տւել, որ սոյն 1925 թւին սնիրաժէշտ պիտի լինէր աւելի լայն ծաւալով տանել աշխատանքները. այդ իսկ պատճառով սոյն թւին էջմիաճնի Տրոպկայանին կից, փոխանակ անցեալ տարւայ 4 խմբի, աշխատում է 6 խումբ հետեւեալ գիւղերի շրջանում իաթունարիս, Փարաքար, Զէյվա, Սարգանլար, Ղարաղլաղ եւ Սամաղար:

Գիտական աշխատանքներն աւելի կատարեալ կերպով տանելու համար այս տարի Լաբորատորիան աւելի է նոխացրած, սան.—լուսաւորչական աշխատանքները աւելի պարզ եւ հասկանալի դարձնելու համար ծեռք են բերւած զանազան նկարներ եւ մի մոգական լապտեր մեծաքանակ գիտական գիտական գիւղերի ու սաբանում են մալարիայի, վեներական, վարակիչ հիւանդութիւնների եւ նրանց մրգրուսների ծագումն ու զարգացումը: Բացի դրանից այս տարւայ մալարիայի սեղոնին հիւանդութեան դէմ մրւելիք պայքարն աւելի գիտնական հաղի վրայ դնելու եւ գործնականապէս աւելի յաջող տանելու համար, տրոպկայանի բժշկական կազմը թէ՛ որակով եւ թէ քանակով աւելի բարձոցքած է, որի հետեւանքով այս տարւայ մեր ոպաւելիքները եւ արդիւնքները պիտի լինին անցեալից գերազանց: Իսկ մինչ այդ, թւական տուեալները ցոյց են տալիս, որ այս ամառ բժշկական օգնութեան դիմունների քանակը անցեալ 1924 թւի համեմատութեամբ, շատ աւելի բարձր է: Այս երեւոյթը էջմիաճնի տրոպկայանի անցեալ տարւայ գործունէութեան եւ ընակչութեան ինքնագիտակցութեան բարձրանալու հետեւանք է:

Ստորեւ բերած ցուցակը ցոյց է տալիս էջմիաճնի տրոպկայանի հիւանդների շարժման պատկերն ըստ ամիսների 1925 թւի շրջանում: Այս պատկերից պարզւում է, թէ ինչ ոյէս մի անգամից ըննկւում ու ծաւալում է մալարիան ամառնային ամրսներին, եւ թէ որքան նա կործանարար է ընակչութեան համար, եթէ

տրոպկայանի կազմն իր գերագոյն ճիգերը չթափի այդ խոշոր չարիքի առաջն առնելու իր ժամանակին, ըստ տեղի եւ կարիքի՝ իրեն գործակից ունենալով թէ՝ տեղական կառավարական մարմինների աջակցութիւնը եւ թէ մանաւանդ ժողովրդի գիտակից տարրի մասնակցութիւնն հանրային այդ խոշոր չարիքի դէմ սլայքարելու անհրաժեշտ գործում:

Մալարիայով հիւանդների 2 արժուան տեղեկագիրն ամսուշ-ամիս 1925 թ.


	ՅՈՒՆ.	ՓԵ-	ՏԵ-	ԱՊ-	ՄԱ-	ՅՈՒ-	ՅՈՒ-	ՅԵՊ-	ՅԵՎ-	ՅԵԿ-
	ՎԱՐ	ՏՐ-	ԱՐ	ՐԻԼ	ՅԻՍ	ՆԻՍ	ԼԻՍ	ՏԵՄ-	ՅԵՄ-	ՏԵՄ-
Առաջ. այցելու	51	109	167	207	303	407	1380	1550		
Կրկնակի	180	344	868	1294	2180	2240	5978	7273		
Ընդամենը	231	453	1035	1501	2483	2647	7358	8823		

բացի այս այլ եւ այլ հիւանդութիւններով յաճախումներ են եղել 3519, ընդամենը 27850 ութ ամսւայ ընթացքում 1925 թ.:


բացի ծրոպկայանից եւնրա խմբերից էջմիածնայ գաւառում այս 1925 թւին բացւած է եւ ընդիանուր տիպի մէկ բժշկակայան՝ Սարդարապատ կայարանում, Սարդարապատի շրջանի գիւղացիներին, այս տեղ գտնուող Պետական բամբակալտիչ գործարանի բանւորներին, Պետական մանկական գաղութի երեխաներին եւ մանկական քաղաք կառուցող բանւորներին բժշկական օգնութիւն ցոյց տալու համար:

Շնորհիւ այն հանգամանքին, որ այս շրջանը համարւում է մալարիայով տառապող վայր, այստեղի բժշկակայանն ունի երկու տեսակի գործունէութիւն հետազնդելով ուրոյն նպատակներ: Առաջինն է՝ պայքար մալարիայի դէմ. հետազոտական աշխատանքներ այդ ուղղութեամբ, երկրորդը՝ բժշկական օգնութիւն այլ տեսակի հիւանդներին: Ինչպէս ամէն տեղ, այստեղ եւս, բացի բժշկական ու հետազոտական աշխատանքներից, տարւում են եւ սան.—լուսաւորչական աշխատանքներ: Իւր բացման օրից մինչեւ օգոստոսի 1-ը այս բժշկակայանն օգնութեան է հասել 4960 յաճախորդների, որոնք ըստ ամիսների բաժանւում են ստորեւ բերւած տեղեկագրի հասեմատ:

Հայաստանի Կարմիր համբաւ Եջմիածնի տրոպիկական հիւանդութեանց բժշկականի հիւանդների պալատ



Հայաստանի Կարմիր Խաչի Եջմլաձնի արքակիւնաւ իւսունակիւն կը կակայան



1925 թ.	Մալարային յառախ.			Զանազան հիւանդ.			Ընդհանուր		
	Ա.Մ.Ս.Ն.Ե.Ր	Առաջին	Կրկնակի	Առաջին	Կրկնակի	Առաջին	Կրկնակի	Առաջին	Կրկնակի
Մայիս	69	86	225	136	294	224	519		
Յունիո	101	301	685	637	786	938	1774		
Յուլիս	209	690	860	959	1069	1649	2718		
Օգոստոս	130	756	547	880	677	1636	2313		

Ինչպէս այս տեղեկագրից երեւում է, յաճախորդներից 1456թ կազմում են մալարիայով հիւանդները:

ինչպէս վերեւում ասւած է, Հայաստանի կարմիր խաչն իենց սկսնական շրջանից որոշել էր իր գործունէութիւնը տարածել Երկրի ծայրագաւառներում եւ խուլ անկիւններում։ Այդպիսի մի վայր է Մեղրու շրջանը, որը ընկած է Արաքս գետի ծախս ափին եւ շնորհիւ յարմար ճանապարհների բացակայութեան կտրւած է կենտրոնից։ Այս շրջանն իր աշխարհագրական դիրքի եւ կլիմայական խայմաանների պատճառով, մի հիւանդու վայր է, առաւելապէս մալարիայով վարակւած։ Հայաստանի կարմիր Խաչի Գրւիւաւոր Վարչութիւնն 1923 թւի դեկտեմբերին այնտեղ կազմակերպում է իր մասնաճիւղը, իսկ 1924 թւի յունուարին արդէն բաց է անում Մեղրի գիւղում բժշկակայան։

1924 թւին՝ այս բժշկակայանն ունեցել է 6993 այցելու հիւանդ եւ 1925 թ. մինչեւ օգոստոս 7475, որոնք ըստ ամիսների բաժանում են այսպէս՝

ԱՄԻԱԾ	ԶՈՒՆ-ՓԵՄԾՐ-	ՎՐԱՎՈՒՄ	ՅՈՒՆԻՑԻ			ՅՈՒՆԻՑԻ			ՅՈՒՆԻՑԻ		
			ՅՈՒՆԻՑԻ								
1942	—	112	203	230	333	309	728	1075	1097	1084	1171
1925	765	1025	1121	1026	686	634	2218	—	—	—	651


Ի նկատի ունենալով այն հաճգամանքը, որ այս շրջանը նոյնպէս մալարիայի մեջ բոյն է, ուստի Գլուխաւոր վարչութիւնը որոշում է 1925 թւին Մեղքու բժշկակայանն վերածել տրոպիկական կայանի, ըստ օրինակի եւ ձեւի էջմիածնի Տրոպիկայանի, միևնույն նպատակներով, սակայն այն տարբերութեամբ միայն

որ մալարիայի սեզոնից դուրս այս տրոպիկայանը եւս բացի մալարիայի վերաբերեալ աշխատանքներից, կատարի եւ ընդհանուր տիպի գիւղական հիւանդանոցի դերը: Մեղրու ազգաբնակութիւնը, տեղեկանալով Գրիւաւոր Վարչութեան այսպիսի որոշման մասին, ամենայն սիրով ընդառաջում է այդ ծրագրին եւ շտապում աջակցել այդ որոշման օր առաջ ի կատարն ածելուն: Այդ նպատակով գիւղի բնակիչները հիւանդանոցի կարիքների համար, կարմիր Խաչի տրամադրութեան տակ են դնում գիւղի ամենայարմար տունը որի հիմնական վերանորոգման ու կահաւորման գործը վերցնում է իր վերայ կարմիր Խաչը:


1925 թւի մայիսի վերջերում, երբ Հայաստանի կարմիր Խաչի Վարչութիւնից ուղարկւած անձնական կազմը բաղկացած 3 բժշկից, 2 գթութեան քոյրից եւ մեկ մանկաբարձուհուց տեղէ հասնում, Մեղրու տրոպկայանը սկսում է իր գործունեութիւնը՝ նախ կարմիր Խաչի ամբուլատորիային կից, իսկ յունիսի 8-ից արդէն իր սեփիական շենքում:

Շրջանում կատարւած հետազոտական աշխատանքները երեւան հանեցին մալարիան տարածող մոծակների *Anopheles* ցեղից հետեւեալ տեսակները՝  
1) *Anopheles maculipennis* 2) *Anopheles bifurcatus* եւ  
3) *Anopheles superpictus*, որոնք գլխաւորապէս տարածուած են շրջանի հարաւային գոտում:

Մալարիայի տարածման չափերը որոշելու համար հետազոտութիւններ են կատարւել բնակչութեան մէջ: Առաջին հերթին հետազոտւել են Մեղրու 2 դպրոցի աշակերտները, ընդամենը 217 աշակերտաշակերտուիններ, 9—18 տարեկան հասակում: Փայծախային ինդէքսն այստեղ հաւասար է 53-ի, Ռոսի ինդէքսը՝ 2.5-ի: Մանկապարտէզի երեխաները (6—8 տարեկան) տւին մեծացած փայծախների 23%-ը: Պարագիտային ինդէքսը, որը դուրս է բերւած 217 աշակերտ-աշակերտուինների արեան հետազոտութեան հիման վրայ, հաւասար է 11.3-ի: Նոյն նպատակով կատարւած է շրվանիճոր գիւղի բնակչութեան հետազոտութիւնները, ընդամենը 424 հոգի: Փայծախային ինդէքսը՝ 67.4, Ռոսսինը՝ 2.7:



զոմուզի վշտականութեա վեպութեա դոկտրինաս վագովը վարութեա մարտու վեպտունը



Աւելի մանրամասն հետազոտութիւնների տւեալ-ները ցոյց են տալիս, որ այս շրջանում բնակչութեան վարակումը մալարիայով կարելի է համարել միջակից բարձր: Միւս հիւանդութիւններից՝ շրջանում տառած-ւած են աղիքային հիւանդութիւնները: Տրոպկույսինի լաբորատորիայում ձեռասարկած փորլուժութեամբ հր-ւանդ երեխանների եւ մեծերի կղկղանքների հետա-զոտութիւնները պարզեցին որ աղիքային հիւանդու-թիւնների պատճառ են մի շարք պատոգեն *Proto-  
zoa, entamoeba histolytic, trychomonas intestin, enteroc-  
coli* եւայն:

Երեխանների մէջ չափազանց տարածւած փորլու-ժութիւնը պայմանաւորւած է նոյն պարագիտներով: Բնակչութեան գրեթէ 100%-ը տառապում է աղիքա-յին նիթուններից, որոնք յանախ պատճառ են դառ-նում սուր եւ չարւորակ սակաւարիւնութեան:

Բուժական աշխատանքը շրջանում կատարւած է հետեւեալ չափով՝ յունիս ամսում աշխատել է Մեղ-րու ամբուլադորիամ. ընդունւած են եղել առաջին անգամ 87 մալարիկ, որոնք յանախել են 247 անգամ, միւս հիւանդութիւններով եղել է 387 յանախում: Բա-ցի Տրոպկայանի ամբուլատորիալից յուլիսին աշխա-տել են շրջանում եւ երկու շրջիկ խմբեր Լեհվագ եւ Շվանիձոր գիւղերում, ընդամենը յուլիսի ամսում ընդունւած են եղել 332 մալարիկ, որոնք յանախել են 1194 անգամ, իսկ ուրիշ հիւանդներ եւս ունեցել են 1024 յանախում. ընդամենը՝ 2218 յանախում: Բացի դրանից բժիշկները յանախ այցելում էին հիւանդնե-րին իրենց տանը:

Տրոպկայանի լաբորատորիան կատարում էր զա-նազան կլինիկական հետազոտութիւններ՝ արեան, մէ-զի, կղկղանքի, վէրքերի արտաթորանքի, հեղուկների, խորխիսի եւ այլն: Մի ամսում կատարւած են մօտ 600 հետազոտութիւն:

Սան.—կրթական աշխատանքները տարւում էին ինչպէս Մեղրիում, այնպէս էլ շրջանի միւս գիւղե-րում. կազմակերպում էին նաև զրոյցներ, ինչպէս գիւ-ղամիջում, այնպէս էլ ամբուլատորիայում երթեւեկ

իիւանդների իա ը: Գիւղացիներին առանձնապէս հետաքրքրում էի մալարիայով վարակւելու պատճառները, երեխա ըի խնասելու խնդիրները եւ թոքախտին վերաբերող հարցերը

Պրոֆիլակտիկ աշխատանքի ասպարիզում տրոպկայանը, ի նկատի առնելով, որ շրջանում ցրւած բազմաթիւ ճահիճները եւ լճակները գոյանում են անկանոն ոռոգումից, առաջարկ արեց գաւառային գործադիր կոմիտէին իր նիստերից մէկում քննել ոռոգման կանոնաւորման հարցը: Առաջարկն ընդունելով գաւառային գործադիր կոմիտէն իրատարակել է պարտադիր որոշում, ըստ որի իւրաքանչիւր գիւղացի պատասխանատու է իր հողերի վրայ գոյացող ճահիճների եւ առիասարակ կանգնած ջրերի համար եւ պարտաւոր է այդպիսիները ինքը չորացնել:

Մեղրու շրջանում մալարիայի դէմ պայքարը մեծ դժուարութիւններ չի ներկայացնում եւ մօտակայ տարիների սիստեմաթիկ աշխատանքներն, անշուշտ, կ'ունենան իրենց դրական արդիւնքը՝ վերջ տալով մալարիայի գոյութեանը այս հարուստ գաւառում:

Մալարիայի տեսակէտից անապահով վայր է համարւում եւ դարալագեազ գաւառի Արփա գիւղի շրջանը, որի ազգաբնակութեան 86% ըստ տւեալների վարակւած են մալարիայով:

1924 թւին այստեղ մասնաճիւղ կազմակերպելով, Գլխաւոր Վարչութիւնը, ինչպէս վերեւում յիշատակւած է, այստեղ է փոխադրում կոտայքի շրջանի բանաքեռ գիւղի բժշկակայանը, որը իշնց նոյն 1924 թւի իոկտեմբերից սկսում է աշխատել եւ 1924 թւի վերջի երեք ամիսների ընթացքում օգնութեան է հասնում 1524 իոգու, որն ըստ ամիսների այսպէս է բաժանւում:

1924	Հոկտ.	Նոյեմբեր	Դեկտ.	Ընդամէնը
Հիւանդների թիւր	622	496	406	1524

Այստեղի հիւանդութիւնների մէջ մալարիան, առաջին տեղը բռնելով, բնականաբար ուշադրութիւնն է գրաւում Գլխաւոր Վարչութեան, որը որոշում է կայացնում այստեղ եւս ունենալ էշմիածնի տիպի տրոպկայան 10 մշտական մահճակալով, լաքորատորիայով եւ ամբուլատորիայով։ Իր կողմից Արփա գիւղի ազգաբնակութիւնն եւս, ընդ առաջ գնալով Վարչութեան այս որոշման, այդ նպատակով տրամադրում է երկու կիսաշէն տուն, որոնք Գլխաւոր-Վարչութիւնը նորոգում է ու կահաւորում։ Այս տրոպկայանն եւս Մեղրու կայանի նման մալարիայի սեզոնից դուրս, պէտք է ծառայի միաժամանակ եւ իբրեւ գիւղական հիւանդանոց։

Մինչեւ տրոպկայանի բացումն, այստեղ շարունակում է աշխատել բժշկակայանը, որն այս տարւայ հիւանդութիւնների շարժման պատկերը ներկայացրել է հետեւեալ աղիւսակով.

1925	ՅՈՒՆ-	ՓԵ-	ՏԵ-	ԱՊ-	ՄԱ-	ՅՈՒ-	ՅԵՊ-	ՆՈ-	ԴԵԿ-
ՎԱՐ	ՎԱՐ	ՎԱՐ	ՎԱՐ	ՎԻԼ	ՎԻԼ	ՎԻԼ	ՎԻԼ	ԲԵՐ	ԲԵՐ
Հիւ- ւանդ- ների Յանա-լ իում Ընդամենը	Առաջ. 291	163	227	223	227	163	145	125	.
	251	301	356	337	257	212	159	135	.
	542	464	583	570	484	375	304	260	.

Այսպիսով Հայաստանի կարմիր Խաչի Գլխաւոր  
Վարչութիւնը տրամադրում է Թէ՛ Մեղրու Եւ Թէ Ար-  
փայի տրոպկայաններին այն ամէնը, ինչ ունի Եջմիա-  
ծնի տրոպկայանը՝ այն է 10 մահճակալանց ստա-  
ցիոնար, լաւ կահաւորւած լաբորատորիա, երթեւեկ  
հիւանդների համար ամբուլատորիա եւ մասնագիտա-

ՆՈՐ-ԲԱՅԱԿԱԳԻ ԱԿԱՐԱԲՈՒԺԱԿՍՎ

ՀՐԴԻ Ի-ՈՒՄԱ

## ՀԻՎԱՆԴԵՐԻ ՃԱՐԺՈՒՄՆ

1925 թ ՕԳՈՍՏԻ

- Առաջին ազգակօրս
- Կրամակի ազգելույ

4513

ՏՐԱՒՈՄԱ

820

ԶԱԽԱԳԱԿ

310

797

73

145

109

391

548

997

ՏՐԱՒՈՄԱ

460

378

417

198

204

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌՄԻ ԽԱՔ: ՆՈՐ-ԲԱՅԱԿԱԳԻ՝ ԱԿ-  
ԱԹՈՒԺԱԿԱՆ ՀՐԴԻ Ի-ՈՒՄԱ

## ՀԻՎԱՆԴԵՐԻ ՃԱՐԺՈՒՄՆ

1925 թ ՀՈԼԿԻՄԻ:

1552

- Առաջին ազգակօրս
- Կրամակի ազգելույ

4513

ԸՆԴ ԻԿԱՆՈՒՄ ԴՐԱ ԱՎԱՐԱՐԴ ԿԻՆ

ԴՐԱ ԱՎԱՐԱՐԴ ԿԻՆ

Անապատահ երեխանել



կան պատրաստութիւն ունեցող բժշկական կազմ, միանգամայն հաւատալով՝ որ այս տրոպկայայաններն եւս կը ցուցադրեն տոկուն աշխատանք, մատուցելով տեղի ժողովուրդին այնպիսի ծառայութիւններ, ինչպիսին մենք տեսել ենք էջմիածնի տրոպկայայանում:

Սակայն կարմիր Խաչի Վարչութիւնը իր գործը վերջացրած չի համարում: Հայաստանի հեռաւոր անկիւններից դեռ կան փայրեր, որոնք կարիք են զգում կարսիբ Խաչի օժանդակութեան: Եւ ահա 1925 թւի մայիսի 5-ին կարմիր Խաչի Գլխաւոր Վարչութիւնը կազմակերպում ու բանում է Դիլիջանի Սեւ-Քարի գիւղում մէկ բժշկակայան, որի համար դիմում էին արել թէ՛ Սեւ-Քարի հասարակութիւնը եւ թէ Դիլիջանի մասնաճիւղի Վարչութիւնը: Սեւ-Քարի հասարակութեան խոշոր տոկոսն անդամագրւելով Հայաստանի կարսիր Խաչին, կարողանում է իր միջոցներով կահաւորել բժշկակայանը, տրամադրելով նրա համար եւ յարմարաւոր շէնք: Սեւ-Քարի շրջանի համար աւելի քան անհրաժեշտ այս բժշկակայանից օգտում են ոչ միայն Սեւ-Քարի եւ շրջանի ազգաբնակութիւնը, այլ եւ բարանայի ու զազախի շրջանից մի մասը: Ինչպէս բոլոր բժշկակայանները, սա եւս բժշկական օգնութիւն է ցոյց տալիս ոչ միայն երթեւեկ, այլ եւ տներում ու մերձակայ գիւղերում գտնւած հիւանդներին, բացի այդ, բժշկական խումբը ժամանակ առ ժամանակ շրջում է եւ գիւղերը, հիւանդներին տեղն ու տեղը բժշկական օգնութիւն ցոյց տալու համար: Միեւնոյն ժամանակ գիւղացիութեան համար նա կազմակերպում է եւ դասախոսութիւններ ու զրոյցներ: Այս բժշկակայանն իր սկզբնաւորութեան օրից մինչեւ ս/թ սեպտեմբերի մէկն ունեցել է 8052 յանախումներ, որոնցից 2746 մալարիկներ:

Հիւանդութիւնների շարժման պատկերն երեւում է ստորեւ բերած տախտակից՝

1925 թ.	Մալարիայով հիւ.		Զանազան հիւանդ.		Ընդառակ գլուխ.	
	ԱՄԻՍՆԵՐ	Առաջին	Կրկնակի	Առաջին	Կրկնակի	ԿՈՒՄԱՐ.
Մայիս	79	40	151	93	233	36
Յունիս	221	333	502	636	723	1692
Յուլիս	289	625	527	1113	816	2554
Օգոստոս	239	920	624	1660	869	2580
						3443

Ի նկատի ունենալով, որ Սեւ-Քարի շրջանը մալարիայի տեսակէտից կարեւոր վայր է, կարմիր Խաչի վարչութիւնն առաջիկայ տարում իր անելիքներից մէկն է համարում այստեղ մշտական մահճակալներով մի հիւանդանոց հիմնել, եթէ ի հարկ է նիւ-

թական միշոցների պակասութիւնն արգելք չլինի այս  
կարեւոր պահանջը բաւարարելու:

---

Ահա այն ջանքերը որ հանդէս է բերել կարմիր  
խաչը մալարիայի եւ ընդհանրապէս տրոսլիկական  
հիւանդութիւնների դէմ կռւելու համար:

Այժմ անցնենք մի այլ, Հայաստանում ոչ պա-  
կաս աւերումներ կատարող հիւանդութեան, որի  
դէմ նոյնպէս կռւում է Հայտստանի կարմիր խաչը:

Ցայտնի է, որ Հայաստանի որոշ վայրերում վա-  
զուց բոյն է դրել աչքացաւը, մանաւանդ տրախոման,  
որը վարակիչ բնոյթ ունի եւ խիստ տարածւած է  
շնորհիւ ազգաբնակութեան տգիտութեան եւ յետա-  
մնաց նիստ ու կացին: Այդպիսի հիւանդութեամբ  
վարակւած շրջաններից են եւ Ն.-Բայազետի գաւա-  
ռի որոշ մասերը:

Հայաստանի կարմիր խաչի վարչութիւնը, նպա-  
տակ ունենալով այդ հիւանդութեան դէմ եւս մաքա-  
ռել բժշկական օգնութիւն ցոյց տալով Հայաստանի  
ազգաբնակութեանը, կազմակերպում է մի շրջիկ բը-  
ժշկական խումբ, մասնագէտ բժշկի գլխաւորութեամբ  
եւ մատակարարելով նրան անհրաժեշտ գործիքներ,  
դեղորայք ու այլ պարագաներ, ուղարկում է նրան  
Ն.-Բայազետի գաւառը: Կարմիր խաչի նորերս կազ-  
մակերպած Ն.-Բայազետի մասնաճիւղը տեղական մար-  
մինների հետ աջակցութիւն է ցոյց տալիս այդ խըմ-  
բին, որն սկսում է իւր գործունէութիւնը ս/թ յու-  
նիսի 15ից նախ Ն.-Բայազետ քաղաքում, ապա տեղա-  
փոխում է Գալի-Ղարդաշ գիւղի եւ բասար-քեչարի  
շրջանները: Թէ՛ զեկուցումները եւ թէ պաշտօնական  
տեղեկութիւնները վկայում են այն օգտակար աշխա-  
տանքների մասին, որ տանում է այդ խումբն: Եւ  
չնայած դաշտային աշխատանքների եռուն շրջանին,  
բոլոր հիւանդները թողնելով գործը, մի քանի վերստ  
հեռաւորութեան վրայ գտնւող վայրերից գալիս են  
բժշկութիւն ստանալու: Սա արդէն ցոյց է տալիս, թէ  
ինչքան մեծ է եղել բժշկական խմբի կարիքն այդ  
շրջանում եւ ինչքան նպատակայարմար է եղել բժ-  
շկական խմբի առաքումն այդտեղ:

Սկզբնական շրջանում, այս է յունիսի 15-ից մինչեւ 30-ը. Ն.-Բայազետում այդ խումբն օգնութիւն է հասցըել 559 հոգու, որոնք ունեցել են 1059 յանախում, եւ որոշ թւռվ հիւանդների տեղաւորել Ն.-Բայազետի հիւանդանոցում, ուր կատարել է Վիրահատումներ, կատարակտի եւ այլ տեսակ հիւանդութիւնների:

Յունիսի սկիզբից տեղափոխւելով Դալի-Ղարդաշ գիւղը, իսկ ապա Բասար-Բէչարի եւ Ելենովկայի շրջանը, այս խումբն օգնութիւն է ցոյց տւել յուլիս, օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներում 1525 հիւանդի, որոնք ունեցել են 6046 յանախում. Երեք եւ կէս ամսւայ ընթացքում կատարել է 162 Վիրահատում, որից կատարակտի՝ 34:

Թէ ինչքան է տարածւած տրախոման այս շրջանում եւ ինչ հետազօտութիւններ է կատարել այս խումբն այդ գիւղերի ազգաբնակութեան համար, մեզ պարզում է ստորեւ բերւած աղիւսակը, որ թւական տւեալների մի մանրամասն տեղեկագիր է:

**Նոր-Բայազետի գաւառի Գիւղաջիկ եւ Դալի-Ղարտաշ գիւղերի ընակչութեան հետազօտութիւնը ըստ հասակային խմբաւորումների, կատարած Յուլիսին 1925 թ.**

ՀԱՍԱԿ ՄԱՐԵԼԻԱՆ	ՀԵՏԱԶՕՏՈՒԱՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՏՐԱԽՈՄԱՅՈՎ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	%
0—1	45	3	6,6
1—10	314	42	13,3
10—20	265	62	23,4
20—30	165	24	14,5
30—40	169	41	24,2
40—50	94	27	28,7
50—60	75	18	24
60—70	34	13	38,3
70—80	14	5	36

Նոր—բայցազետի գաւառի Գրիբուլախ եւ  
Տաշքենս գիւղերի բնակչութեան հետազօտու-  
թիւնը ըստ հասակային խմբաւորումների, կա-  
տարւած Օգոստոսին 1925 թ.

ՀԱՍԱԿ տարեկան	Հետազօտւածների քանակը	Տրախոմայով հետազօտւածների քանակը	%
0—1	26	4	15,4
1—10	124	42	33,8
10—20	182	52	28,5
20—30	108	30	27,7
30—40	118	36	30,5
40—50	70	22	31,4
50—60	42	6	14,4
60—70	12	2	16,6

Բացի գուտ բուժական եւ հետազօտական աշ-  
խատանքներից, ակնաբուժ խումբն ունեցել է եւ մի  
շարք դասախոսութիւններ ու զրոյցներ, աչքի թիւան-  
դութիւնների ու նրանց տարածման եղանակներին եւ  
աչքի առողջապահութեան վերաբերեալ:

Այս խմբի կարճ ժամանակաշրջանում կատարած  
աշխատանքներն ու նրա արդիւնքները մեր առաջ  
պահանջ են դնում ոչ միայն շարունակել, այլ այդ  
խմբի կազմն ուժեղացնելով, լայնացնել աչքի քժ-  
կութեան գործը, թէ՝ այս եւ թէ այլ գաւառներում:

Համառօտ կերպով ուրւագծելով Հայաստանի կար-  
միք Խաչի գործունէութիւնը, վերեւում յիշած հիւան-  
դութիւնների եւ այլ աննպաստ պայմանների դէմպայ-  
քար մղելու գործում, մենք չենք կարող կանգ չառ-  
նել Հայաստանում գոյութիւն ունեցող եւ մի այլ խիստ  
կարեւոր երեւոյթի վրայ, որն է անապաստան երե-  
խաների խնդիրը:

ցանկալով օգնութեան հասնել անապաստան երեխաներին, կարմիր Խաչի Վարչութիւնը նախ մի քանի ամսւայ ընթացքում դրամական նպաստ է յատկացնում ամսէ-ամիս «Հայաստանի անապաստան երեխաների բարեկամների ընկերութեան»-ը 100 երեխաների պահպանման համար եւ, կազմակերպելով մի մանկատուն, իր անմիջական խնամքի տակ է առնում առայժմ 100 անապաստան տղայ երեխաներ 8—14 տարեկան, իոգալով նրանց ոչ միայն ֆիզիքական ապահովութեան խնդիրը, այլ եւ դաստիարակչական մեծ գործը:

Ազատւելով փողոցից եւ ապրելով կեանքի այլ բարենպաստ պայմանների մէջ. այս անապաստան եւ անմեղ կերպով «խուժան» մականւանն արժանացած որբ երեխաները, կարճ ժամանակամիջոցում կերպարանափոխութմ են թէ՛ ֆիզիքապէս եւ թէ բարոյապէս: Այժմ նրանք միանգամայն անհանաչելի են: Այժմ նըրանք առողջ են ու մաքուր. նրանցից շատերը օժտըւած են փայտուն ընդունակութիւններով՝ ինչպէս նըրազական, երաժշտական եւայլն:

Այս ընդունակութիւնների զարգացումն ուղիղ շաւղով տանելու համար մեծապէս մտահոգւած է այժմ կարմիր Խաչի Վարչութիւնը, յատուկ նպատակ ունենալով աստիճանաբար հաւաքել «փողոցների լէգիոնի» մնացած մասերն եւս, բարձրացնելու նրանց «խուժանի» մակարդակից, տանելու նպատակով դէպի ապագայ ազնիւ քաղաքացին, դէպի ազնւացման այն մոգական միջավայրը որ դաստիարակութիւն է կոչում, եւ որ մարդկային արժանապատւութեան մարզարան է հանդիսանում:

Սակայն կարմիր Խաչի Վարչութիւնն իր առաջադրած սոյն բարձր եւ պատասխանատու գործն ի կատար ածել չի կարող միայն իր ուժերով, եթէ նըրան զօրավիգ չլինին թէ՛ տեղիս հայ հասարակութիւնը եւ թէ արտասահմանի հայ հատւածները, որոնք իրենց մարդկային բարոյական պարտքը պիտի համարեն այս նպատակի համար օժանդակել կարմիր Խաչին:

Հայ Հատւածների իրական օժանդակութեան գործի ակնկալութեամբ Հայաստանի կարմիր Խաչի գըւ-

խաւոր Վարչութիւնն այս հաւատն ունի. Թէ նա այս ժամը խնդիրը կը լուծի պատւաւոր կերպով, որով եւ իայ իրականութեան այս խիստ ցաւոտ երեւոյթն իր վախճանը կստանայ մօտիկ ապագայում:

Հայաստանի կարմիր Խաչի Գլխաւոր Վարչութիւնն իր գործունէութիւնը չի զլացել մեր կեանքի մի այլ ասպարէզում: Ցանկանալով իր բժշկական հիմնարկութիւններում գործը յանձնել աւելի պատրաստւած եւ վստահելի անձանց, նա 1923 թւի Յունվարին կազմակերպում է Երեւանում Գթութեան քոյրերի երկամեայ դասընթացներ, որպիսի հիմնարկի կարեւորութիւնը չափազանց զգալի է եղել մեր երկրում: Այս երկամեայ դասընթացներն աւարտող գթութեան քոյրերը պէտք է փոխարինէին այն քոյրերին, որոնք այդ կոչմանն արժանացել էին պատերազմի ժամանակ՝ աւարտելով կարճատեւ դասընթացներ: Այսպիսի կարճատեւ եւ միակողմանի ծրագրով դասընթացներ աւարտած գթութեան քոյրերը չէին կարող իրենց վրայ վերցնել հիւանդներին խնամելու գործը Հայաստանի կարմիր Խաչի բժշկական հիմնարկներում, ուր հիւանդները լինում են բազմատեսակ, ու պահանջում են բազմակողմանի խնամք եւ օգնութիւն: Ի նկատի ունենալով այս ամէնը, Գլխաւոր Վարչութիւնն հաստատելով յատուկ բժշկական յանձնաժողովի կողմից մշակւած առարկաների եւ դասաւանդման ծրագիրը, բաց է անում վերոյիշեալ դասընթացները, ընդունելով մեծ մասամբ միջնակարգ կրթութիւն ունեցողներին թւով 23 հոգի:

Առարկաների դասաւանդման համար հրաւիրւում են մասնագէտ բժիշկներ:

Գործնական աշխատանքների համար դասընթացների տրամադրութեան տակ են դրւում Երեւանի հիւանդանոցներն ու մանկավարժական թանգարանը:

1925 թւի սկիզբներին Հայաստանի կարմիր Խաչը ունեցել է իր առաջին խումբ շրջանաւարտները, որոնց եւ տեղաւորել է թէ՛ իր եւ թէ գետական բժշկական հիմնարկներում: Սակայն ի նկատի ունեֆշշկական այս հանգամանքը, որ նոյնանման դասընթացներ կենիսականում (նախկին Ալեքսանդրոպոլում) մի-

աժամանակ բաց էր արել եւ Ամերիկեան նպաստամատոյց Կոմիտէն; Կ. Խաչի Գլխաւոր Վարչութիւնը ժամանակաւորապէս փակում է իր դասընթացները, որոնք սորից կը վերաբացւեն, երբ կրկին նրանց կարիքը կզգացւի մեր երկրում:

Անցնելով Հայաստանի Կարմիր Խաչի նիւթական միջոցներին, պէտք է ասել, որ նրա մուտքի հիմնական աղբիւրը — դա կառավարութեան կողմից սահմանած յատկացումներն են եւ արտասահմանեան մեր մասնաճիւղերի կողմից ուղարկւած նպաստները, որոնց մէջ առաջնակարգ տեղը բռնում է Ամերիկայի մասնաճիւղինը: Համաձայն Հայաստանի ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1922 թ. յունիսի 21ի դեկրետի, Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերութեանը յատկացւում է յաւելեալ 5% տուրք Պետական բոլոր ուղղակի Բարկերից, որպիսին գանձում են կառավարութեան համապատասխան օրգանները եւ փոխանցում Գլխաւոր Վարչութեան:


Համաձայն 1922 թ. դեկտեմբերի 27ի դեկրետի՝ յօգուտ Հայաստանի Կարմիր Խաչի գանձում է նըմանապէս իւրաքանչիւր արտասահմանեան անցանդութիւնը 15% ը: Վերջերս՝ Վարչութեան կողմից միջնորդութիւն է յարուցւում իր օգտին գանձել տալու եւս վճարովի մուտք ունեցող բոլոր տեղերից (Թատրոն, կինոյ եւայլն), նրանց մուտքի 3% ը եւ հաւանական է որ մօտիկ ապագայում կը յարգւի այդ միջնորդութիւնն եւս:

Բացի այդ, համաձայն Անդրկովկասեան ֆեդերացիայի ժողովրդական Կոմիսարների Խորհրդի որոշման, Անդրկովկասեան Երկաթուղային տոմսերի արժեքից եւս տոկոսական յատկացումն է սահմանած յօգուտ Անդրկովկասեան Երեք Հանրապետութիւնների Կարմիր Խաչների, որից Հայաստանի Կարմիր Խաչը ստանում է այդ եկամուտի մէկ երրորդ մասը: Պէտք է աւելցնել, որ այս կայուն մուտքից զատ, որոնց մէջ են մտնում եւ անդամավճարները, թէ՛ կենտրոնը եւ թէ տեղական ֆիւդերը մուտք են ունենում նմանապէս եւ յատուկ կազմակերպւած Երեկոյթներից, զբոսանքներից եւայլն:



Հայաստանի կարմիր խաչի բրեւանի մանկատան սաները

Հոգու բարեկանոնական լոկոտ կտառի վրա կազմով



Հայաստանի կարմիր խաչի Գլխաւոր Թոնտը կազմում է նրա դեղապահեստը, որի սկիզբը դրւել է 1922 թ. մայիսին «Պոլսի Հայ կարմիր Խաչի բժշկական առաքելութեան» կողմից Հայաստանի կարմիր Խաչին Թողած խոշոր քանակութեամբ դեղորայքով:

Զնայած, որ այդ դեղապահեստից անընդհատ մատակարարւում են Հայաստանի կարմիր խաչի բժշկական հիմնարկութիւնները, սակայն շնորհիւ այն հանգամանքի, որ արտասահմանեան մեր Մասնաճիւղերը պարբերաբար դեղորայք են ուղարկում Հայաստան, կարելի է ասել, որ դեղապահեստի պաշարը համարեա մնում է կայուն եւ անխախտ:

Հայաստանի կարմիր Խաչի Գլխաւոր Վարչութիւնը մեր երկրի եւ ժողովրդի կարիքների հետ համեմատած մինչեւ այժմ տարւած աշխատանքներն ու նրանց տւած արդիւնքն անբաւարար համարելով այժմ մտահոգւած է առաջիկայում էլ աւելի լայնացնել իր հիմնարկների ցանցը Հայաստանում, եւ ծրագրել է՝

1) Սօտիկ ապագայում կազմակերպել Լենինականի գաւառում մէկ բժշկակայան, վեներական հիւանդութիւնների դէմ մաքառելու մամար.

2) Լոռի-Փամբակի գաւառի Մեծ Փառնի գիւղի վեներական բժշկակայանը վերածել հիւանդանոցի. մշտական մահճակալներով.

3) Զանգեզուրի գաւառի Ղարագիլիսէ գիւղի բըժշկակայանը վերածել գիւղական հիւանդանոցի՝ 10 մշտական մահճակալով.

4) Դիլիջանի գաւառի Սեւքար գիւղի բժշկակայանը վերածել գիւղական հիւանդանոցի՝ 10 մշտական մահճակալով.

5) Կազմակերպել մի քանի ակնաբոյժ խմբեր աչքի հիւանդութիւնների դէմ մաքառելու համար, թէ՛ Ն.-Բայազետի եւ Թէ այլ գաւառներում:

Բացի այդ՝ Վարչութիւնը որոշել է մալարիայի եւ տրոպկական հիւանդութիւնների դէմ փարած պայքարին տալ աւելի հիմնական, կազմակերպւած բնոյթ, աջակից հանդիսանալով կառավարութեան այդ ուղ-

ղութեամբ ծեռնարկած պատասխանատու եւ դժւարին աշխատանքներին:


Իսկ մեր երկրի ցաւոտ երեւոյթներից մէկը դարմանելու, անապաստան երեխաներին խնամելու մտահոգութեամբ Հայաստանի կարմիր Խաչի Գլխաւոր Վարչութիւնը ծրագրել է լայնացնել երեւանի իր մանկատունը, իասցնելով երեխաների թիւը 100-ից մինչեւ 200-ի, բանալով միաժամանակ Լենինականում՝ մինոր մանկատուն 100 երեխայի համար։ Բոլոր մանկատներին կից պէտք է կազմակերպւին արհեստանոցներ համապատասխան կահաւորումներով։

Հայաստանի կարմիր Խաչի Գլխաւոր Վարչութիւնը յոյս ունի, թէ այն սրտացաւ վերաբերմունքը որով համակւած են ժողովրդական լայն մասսաներն թէ՛ երկրի ներսում եւ թէ արտասահմանում, ապագայում աւելի եւս կը զօրեղանայ, նիւթական ու բարոլական աջակցութիւն տալով նրան (Գլխաւոր Վարչութեանը) կեանքի մէջ կիրառելու իր վրայ վերցրած ծանր պարտականութիւնները՝

ա) Պահպանելու համար մեր ժողովրդի առողջութիւնը, մաքառելով բազմապիսի հիւանդութիւնների դէմ,

բ) Խնամելու համար որբ ու անապաստան երեխաներին, որոնց քանակը դժբախտաբար դեռ մեծ է մեր երկրում։

Մինչեւ այժմ կառավարութեան կողմից տածած վստահութիւնն ու իրական օժանդակութիւնը, հասարակական ուժերի աջակցութեան պատրաստականութիւնը, երկրի եւ արտասահմանեան մեր մասնաճիւղերի օր աւուր անող ինքնագործունէութիւնն իր արդիւնաւէտ հետեւանքներով, մասսայի բարոյական օժանդակութիւնն ու խրախուսանքը, այս բալորը խոշոր չափով գրաւական են Հայաստանում կարմիր Խաչի առաջ դրած բարձր գործի ապագայ յաջողութեան համար։



1922 թ. սարտ 1-ի 8 սրւած 1925 թ. սեպտ. 1-ը արտասահման  
ՍՏԱՑԻԱԾ ԴՐԱՄ, ԴԵՂՈՐԱՅՔ ԵՒ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՍՏԱՑԻԱԾ Ե

	ԳՈՒՄԱՐ	
	ԴՐԱՄ	ՀԱՐԵՎ
1922 Եւ 23 թ. ընթացքում		
1. Դրամ թաւրիզի մասնաճիւղից	700	—
2. Դեղորայք, վիրակապային իրեր Եւ վիրա- բուժ. գործիքներ	43899	01
3. Նիւ-Եօրքի մասնաճիւղից հին զգեստներ Եւ կոշիկներ	22486	38
	67085	39
1924 թ. ընթացքում		
1. Նիւ-Եօրքի մասնաճիւղից 62 հակ հին զգեստ	18185	—
23 պարկ հին կոշիկ	1064	35
2. Դեղորայք Պոլսից 1 արկդ	239	16
Թիֆլիսի իտալական միսիայից	2079	73
Ռումանիայից	1003	70
Մարսէլի մասնաճիւղից	1709	—
Նիւ-Եօրքի մասնաճիւղից	448	50
3. Դրամ թաւրիզի մասնաճիւղից	221	22
	24990	66
1925 թ. ընթացքում մինչ սեպտ. 1-ը		
1. Նիւ-Եօրքի մասնաճիւղից ապրանք	5267	75
2. Դեղորայք բարիզի մասնաճիւղից	1940	42
» » » » »	896	25
Դեղորայք Մարսէլի մասնաճիւղից	188	15
3. Դրամ Աթէնքի մասնաճիւղից 200 տոլար Փարիզի մասնաճիւղից 2000 ֆր.	389	—
	180	—
	8861	57
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ</b>	<b>100937</b>	<b>62</b>

Ծանօթ. Այս գումարին մէջ չի մտնում վեց հարիւր անգլիական  
ֆունտը, որ Հայաստանի Կարմիր Խաչի Բարիզի մասնաճիւղը ղրկած է Հա-  
յաստան, նահիններու չորացման մամար:

ՄԱՍՆԱՑԻՒՂԵՐԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՒ ԽՈՐՀ. ՄԻՈՒԹ. ՍԱՀՄԱՆԵՐԻՑ  
ԶԱՆԱԶԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԵՐՈՒՄ

	ԳՈՒՄԱՐ	
	ԴՐԱՀՄ	ՀԱՆ
<b>1922 թ. ընթացքում</b>		
1. ՆԱԿԵՐ-ՎԵԲ. Հայրապետից	213	90
2. ԵՐԵԿՈՅԹ ԵՒ ՎԻճԱԿԱԽԱղ	700	90
3. ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 5%	2212	70
	<hr/>	<hr/>
<b>3127</b>	<b>50</b>	
<b>1923 թ. ընթացքում</b>		
1. ՎԻՃԱԿԱԽԱՂ	301	—
2. ՆԱԿԵՐ ԲԱԹՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱցՈՒցԻՉԻ ՄԻջոցով	259	15
3. ԱՆԴԱՄԱՎճար	144	50
4. 2 0/0 տուրք զւարժատեղերից	180	—
5. ԵՐԿԱԹՈՒՂՈՒց մասիհանում	270	95
6. ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	5104	79
<b>ԴԵՂՈՐԱՋՔ</b>		
1. ՄՈՍԿԼԱՅԻց	710	—
2. —— 5 հատ ապտեկա	5000	—
	<hr/>	<hr/>
<b>11970</b>	<b>39</b>	
<b>1924 թ. ընթացքում</b>		
1. ԵՐԵԿՈՅԹ	238	80
2. ԱՆԴԱՄԱՎՃԱՐ	487	—
3. 2 0/0 զւարժատեղ մինչ ապրիլ	108	84
4. ԵՐԿԱԹՈՒՂՈՒց մասիհանում	7601	24
5. ԿՈՄՄՈՒՆԱԼ ԲԱՆԿԻց դրամի շահ	296	57
6. ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 5 0/0	22693	02
<b>ԴԵՂՈՐԱՋՔ ՄՈՍԿԼԱՅԻց</b>	<b>271</b>	<b>80</b>
	<hr/>	<hr/>
<b>31697</b>	<b>27</b>	
<b>1925 թ. ընթացքում մինչ սեպտ. 1-ը</b>		
1. ԱՆԴԱՄԱՎՃԱՐ	477	—
2. ԵՐԵԿՈՅԹ	210	44
3. ԵՐԿԱԹՈՒՂՈՒց մասիհանում	3985	91
4. ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ 5 0/0	13948	09
	<hr/>	<hr/>
<b>18621</b>	<b>44</b>	
<b>ԸՆԴԲԻԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ</b>	<b>65416</b>	<b>60</b>
	<hr/>	<hr/>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ**  
**Ապրանքների եւ գեղու**  
**1922 թ. մարտի 1-ից մինչեւ**

**ՄՈՒՏՔ**

	Առև. թ	Լ	Առև. թ	Լ
1. 1922 իւլ 23 թ.				
ա. Արտասահմանից դեղորայք, վիրակապային իրեր եւ վիրաբուժական գործիքներ	43899	01		
բ. Արտասահմանից զանազան ապրանքներ	22486	38		
գ. Մոսկվայից դեղորայք	710	—		
դ. " 5 իատ ապահեկա	5000	—	72095	39
2. 1924 թ.				
ա. Դեղորայք արտասահմանից	5480	84		
բ. " Մոսկվայից	271	80		
գ. " գնւած	529	61		
դ. Ապրանք արտասահմանից	19249	35	25531	60
3. 1925 թ.				
ա. Դեղորայք Արտասահմանից	3024	82		
բ. Ապրանք	5267	75		
գ. Գնւած դեղորայք	1293	53	9586	10
			107213	09

Կ Ա. Ռ Մ Ի Բ Խ Ա Զ Ի  
Ր Ա Ջ Ք Ի Հ Ր Ջ Ա Ն Ա Ռ Ո Ւ Ժ Ի Ւ Ն  
1925 թ. սեպտեմբերի 1-ը

Ե Լ Ք

	Առուք.	Կույ.	Առուք.	Կույ.
1. 1922 Եւ 1923 Թ.				
ա. Դեղորայք մասնաճիւղերին	7120	39		
բ. 5 ապտեկա	5000	—		
գ. Ապրանքներ բաշխւած է մասնաճիւղերին, զանազան հիմնարկութեանց եւ աղքատ լնտանիքների	9033	10	21153	49
2. 1924 Թ.				
ա. Դեղորայք մասնաճիւղերին	6560	58		
բ. Ապրանք	727	94		
գ. " վաճառւած	15220	—		
դ. Դեղորայք	5575	—	28083	52
3. 1625 Թ.				
ա. Դեղորայք մասնաճիւղերին	3580	65		
բ. Ապրանք մանկատն. եւ մասնաճիւղերին	478	43		
գ. Ապրանք վաճառւած	15630	55	19689	63
			68926	64
ա. Մնացող առ 1-ն սեպտեմբերի դեղորայք, վիրակապային եւ դեղատնային իրեր ու վիրաբուժական գործիքներ	32372	99		
բ. Զանազան ապրանքներ	5913	46	38286	45
			107213	09

Հ Ա Շ Խ Ե  
Հայաստանի Կարմիր Խաչի  
1922 թ. մարտի 1-ից մինչեւ

ՀԱՍՈՑԹՆԵՐ

	Դուբ.	ԴԱ	Դուբ.	ԴԱ
<b>1. ՆԻՒՐԱՏԻՌԻԹԻԻՆ</b>				
1922 ա. Վեհափառ իայրապետից	213	90		
» բ. Թաւրիզի մասնաճիւղից	700	—		
1923 գ. Բաթումի ներկայացուցիչից	259	15		
1924 դ. Թաւրիզի մասնաճիւղից	261	22		
1925 ե. Աթէնքի մասնաճ. 200 դոլ.	389	—		
» գ. Բարիզի մասն. 2000 ֆ. 2·05%	180	—	2003	27
ԵՐԵԿՈՅԹ ԵՒ ՎԻՃԱԿԱԽԱՂ				
1922 ա. Հայաստանում Երեկ. Վիճակ.	700	90		
1923 բ.       »       »       Վիճակախաղ	301	—		
1924 գ.       »       »       ԵՐԵԿՈՅԹ	238	80		
1925 դ.       »       »       » 1.54 0/0	210	44	1451	14
<b>3. ԱՆԴԱՄԱՎՃԱՐ</b>				
1923, 24 Եւ 25 թ. 1·74			1694	21
ԱՆԴՐ. ՖԵԴԵՐ. ԵՐԿԱԹՈՒՂ.				
1923 ա. Մասիհանում	270	95		
1924 բ.       »	7601	24		
1925 գ.       »       մինչ յուն. 1, 12.17 0/0	3985	91	11858	10
ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՒ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌԻ.				
1924 ա. Գեղորայքի վաճառքից	5575	—		
» բ. Հին զգեստ. իակ. վաճառքից	15220	—		
1925 գ.       »       »       »       » 37·40%	15630	55	36425	55
<b>ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ</b>				
1922 ա. 5 0/0 յաւելեալ տուրք ուղ- ղակի հարկերից	2212	70		
1923 բ.       »       »       »       »	5104	79		
1924 գ.       »       »       »       »	22693	02		
1925 դ.       »       »       »       45·10%	13948	09	43958	60
			97390	87

Կ Շ Ի Ւ

ԴՐԱՄԱԼԱՆ ՀՐՁԱՆԱՊՈՂԵԿԱՆ

1925 Թ. սեպտեմբերի 1-ը

Ծ Ա. Խ Ս Ե Բ

	ԸՆԴԻՐ	ՀԱՐ	ԸՆԴԻՐ	ՀԱՐ
ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄ				
1922 ա. Պաշտօնեաների ռոճիկ	42	—		
1923 թ. " "	2447	50		
1924 գ. " "	9734	38		
1925 դ. Պաշտօն. ռոճ. մինչեւ սեպ- տեմ. 1-ը, 36.60 0/0	12431	23	29017	91
ԿՈՒԼՏ. ԿՐԹԱԿ. ԵԽ ՍՈՑ. ԱՊԱՀՈՎ.				
ՄԻՆՉԵՒ 1925 Թ. ՍԵՊՏԵՄ. 1-Ը 2.55 0/0		2015	19	
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵԽ ԴԻԷԼՆԱԿԱՆ				
ՄԻՆՉԵՒ 1925 Թ. ՍԵՊՏ. 1-Ը 5.70 0/0		4511	49	
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵԽ ԴԵՂՈՐ. ՓՈԽԴՐՈՒԹ. ԾԱԽՍ				
1922 ՄԻՆՉԵՒ 1925 Թ. 1 ՍԵՊՏ. 5.05 0/0		4008	96	
5. ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵԽ ԶՆԱԿՆԱՏԵՍ. ԾԱԽՍԵՐ				
1923 ՄԻՆՉԵՒ 1925 Թ. 1 ՍԵՊՏ. 4.38 0/0		3481	41	
6. ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ ԵԽ ՕՐԱՊԱՀ.				
1923 ՄԻՆՉԵՒ 1925 Թ. 1 ՍԵՊՏ. 1.88 0/0		1523	84	
7. ՄՆՆԴԱՄԱՏԱԿԱՐ. ԷջՄԻԱԾՆԱՅ ՏՐՈՊԿ. ԵԽ ԵՐԵՒԱՆԻ ՄԱՆԿԱՏԱՆ				
1924 ա. Էջմիածնի ՏՐՈՊԼԿԱՅԱՆԻՆ	983	80		
1925 թ. " "	965	22		
" գ. Մանկատան պարենաւ. մինչ սեպտ. 1-ը, 10.40 0/0	6287	35	8236	37
8. ԴԵՂԱՊԱՀԵՍՏԻ ՎԱՐՁ				
1923 ՄԻՆՉԵՒ 1925 Թ. 1.40 0/0			1095	
9. ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ				
ա. ԵՐԵՎԱՆՈՒՄ Մանկատուն	6301	68		
թ. ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ 3 ՏՐՈՊԼԿ. 21.10 0/0	10689	31	16720	99
10. ԿԱՀ-ԿԱՐԱՍԻ ԵԽ ԶԳԵՍ				
ա. Մանկատան	5060	75		
թ. ԿԵՆՏՐՈՆ. ՎԱՐԺՈՒԹ. 8.64 0/0	1772	63	6833	38
11. ԳՆԻՄԸ ԴԵՂՈՐԱՅՔ ԵԽ ԴԵՂԱՏՆ.				
ԱՌԱՐԿԱՆԵՐ				
1924 ՄԻՆՉԵՒ 1925 Թ. 1 ՍԵՊՏ. 2.30 0/0		1823	14	
		79267	68	
ՄՆԱցորդ ԴՐԱՄ առ 1-Ն ՍԵՊՏ. 1925		18123	19	
		97390	87	

Հիմնաժողովը ըԱրքայի ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՄԱՐԿՈՒԹԻՒՆԵՐՈՒՄ 1925 թ. Առ 15 Հոկտ.




28  
3 n

4-18

---

**Imp. O. BOGHOSIAN**  
**33, Rue Pixérécourt, 33 Paris (20<sup>e</sup>)**

---





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010118

